



ADVANCED
SOCIAL
TECHNOLOGIES

ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ» ԾՐԱԳԻՐ*

ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Հասարակական կազմակերպություն

Հայաստան

2011թ.

ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	3
Գրականության ուսումնասիրություն.....	3
Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ.....	4
Ծախսերի մասին տվյալների նկարագրություն	9
Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն	10
Արդյունավետության մասին տվյալների նկարագրություն	12
Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն	13
Համեմատված տարբերակների/ծրագրերի ամփոփ նկարագրություն	15
ԾԱ գործակցի արդյունքները	16
Արդյունքների նախնական քննարկում	16
Հաջորդ նախնական զեկույցում հնարավոր ընդլայնումների և փոփոխությունների ծրագրեր	17
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	19
Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ.....	19
Ծախսերի մասին տվյալների նկարագրություն	22
Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն	25
Արդյունավետության մասին տվյալների նկարագրություն	26
Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն	27
Ծախս/Արդյունք գործակցի արդյունքները.....	28
Արդյունքների նախնական քննարկում	30
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	32
Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ.....	32
Ծախսերի մասին տվյալների նկարագրություն	36
Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն և արդյունավետության մասին տվյալների նկարագրություն.....	38
Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն	42
ԾԱ հարաբերակցության արդյունքները և արդյունքների նախնական հակիրճ քննարկում	45
Հաջորդ նախնական զեկույցում հնարավոր ընդլայնումների և փոփոխությունների ծրագրեր.....	47
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	49

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գրականության ուսումնասիրություն

Ծախսերի արդյունավետությանը վերաբերող հասանելի գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծախսերի արդյունավետության վերլուծությունը մշակվել և սկսել է օգտագործվել 1960-ական թթ. սկզբում, այնինչ մինչև 2000-ական թթ. կրթության ոլորտի քաղաքականության տարբերակների գնահատման նպատակով՝ նման վերլուծություն իրականացնելու շատ քիչ փորձեր են կատարվել: Որպես այս հարցի պատասխան դիտարկվել է երեք պատճառ. (1) բավարար կարողությունների և ուսուցման պակասը; (2) արդյունավետությունից բխող վստահելի արդյունքների պակասը, ինչպես նաև (3) քաղաքականություն մշակողների կողմից պահանջարկի պակասը: Ընդ որում, վերջին պատճառը համարվել է ամենաէականը: Սովորաբար կրթական ծախսերը բաշխելիս կամ վերլուծելիս բավարար ուշադրություն չի դարձվում քաղաքականությանը և ռազմավարությանը, չնայած այն փաստին, որ կրթության վրա կատարվող ծախսերը պետական բյուջեներում ամենամեծ տոկոսներից մեկն են կազմում:

Հենրի Լեվինը՝ կրթության Ծախսերի արդյունավետության վերլուծության ոլորտում քաջ հայտնի վերլուծաբաններից մեկը, սահմանում է ԾԱՎ-ը որպես համապատասխան արդյունքների մեծության և ծախսերի համադրության մեթոդ, երբ ծրագրային և քաղաքականության այլընտրանքները կարելի է դասակարգել ըստ նրանց արդյունավետության և ռեսուրսների օգտագործման հարաբերության: Ենթադրաբար, այն այլընտրանքները, որոնց արդյունքների նկատմամբ ծախսերը նվազագույնն են (կամ ծախսերի համեմատ լավագույն արդյունքները), ամենագրավիչն են ընդունման համար:

Ինչևէ, ԾԱՎ կիրառումն իրական կյանքում այնքան էլ հեշտ չէ, ինչպես կարելի է ենթադրել սահմանումներից: Առաջին հերթին անհրաժեշտ է տալ խնդրի կամ նպատակի հստակ սահմանումը: Այնուհետև պետք է դիտարկել և գրանցել համապատասխան քաղաքականության միջամտությունները՝ նպատակին հասնելու համար (զարմանալիորեն, ծախսերի տեսանկյունից արդյունավետ որոշ միջամտություններ կարող են կրթության ոլորտից չլինել): Հետո ընտրվում են համապատասխան արդյունավետության չափման միավորներ, որոնք լավագույնս կնկարագրեն միջամտությունները: Սովորաբար կրթական արդյունավետությունը չափվում է մեկ ուսանողի հաշվով գրանցված ձեռքբերումների տեսանկյունից կամ մեկ ուսանողի հաշվով որևէ այլ չափման միավորով: Հաջորդ քայլն այլընտրանքային միջամտություններից յուրաքանչյուրին առնչվող ծախսերի ճշգրիտ հաշվարկն է կամ մոտավոր գնահատականը, ներառյալ ռեսուրսների կամ բաղադրիչների

¹ Հենրի Մ. Լեվին, “Waiting for Godot: Cost-Effectiveness Analysis in Education”, NEW DIRECTIONS FOR EVALUATION, no. 90, Ամառ 2001թ.

նույնականացումը, դրանց գնահատումը կամ չափումը, ինչպես նաև միջամտությունների ընդհանուր (մեկ ուսանողի հաշվով) արժեքների մոտավոր սահմանումը: Ծախսերի չափումից հետո հաշվարկվում են ծախսերի արդյունավետության գործակիցներ՝ տարբեր միջամտությունները համեմատելու նպատակով:

Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ

Պարզ ԾԱՎ

Պարզ ԾԱՎ-ն իրականացվել է շրջանավարտների թվաքանակի, նրանց միավոր ծախսերի և ակնկալվող եկամուտների տեսանկյունից մասնագիտական և բարձրագույն կրթությունների համեմատության նպատակով: Որպես «արդյունքի» միավոր դիտարկվել է կրթության մակարդակից կախված ապագա եկամուտների մակարդակը (դրա տարբերությունը):

Աղյուսակ 1. Պարզ ԾԱՎ

հազար ՀՀ դրամով ²	շրջանավարտների թիվը	Ուսման տարիների միջին քանակը	Ուսուցման տարեկան ծախսը	Ուսուցման ծախսը մեկ շրջանավարտի հաշվով	Ուսուցման ընդհանուր ծախսը	Ակնկալվող տարեկան եկամուտը
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	2,718	2.6	264.9	687.2	1,867,862.9	1,024.0
1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	1,103	2.0	688.4	1,376.8	1,518,557.7	960.6
2. Միջին մասնագիտական կրթություն	1,615	3.0	181.9	545.8	881,397.0	1,067.3
Բարձրագույն կրթություն	28,678	4.1	310.2	1,272.8	36,499,956.4	1,389.5
1. Բարձրագույն (բակալավրիատ և մագիստրատուրա) մասնագիտական	28,255	4.1	300.7	1,238.7	34,999,597.9	1,387.5

² Ներկայումս ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կազմում է 360 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց

կրթություն						
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	423	3.0	479.8	1,439.5	608,888.9	1,526.2

Աղյուսակում ներկայացված տվյալները 2008թ. համար են: Շրջանավարտների թվաքանակի համար աղբյուր է հանդիսանում ՀՀ Վիճակագրական ծառայության “Սոցիալական վիճակը Հայաստանում 2008թ.-ին” փաստաթուղթը: Ուսուցման տարեկան ծախսերի վերաբերյալ տվյալները վերցված են ՕԲՎ հաշվետվությունից, որը հրապարակվել էր Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից: 2008թ. համար ակնկալվող տարեկան եկամտի համար աղբյուր է հանդիսանում ՀՀ Վիճակագրական ծառայության “Սոցիալական վիճակը Հայաստանում 2008թ.-ին” փաստաթուղթը: Միջին մասնագիտական կրթության համար կիրառվել է Հայաստանում 2008թ. միջին տարեկան աշխատավարձը, դրա 90% գործակիցը կիրառվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, 130% գործակիցը՝ բարձրագույն (բակալավրիատ և մագիստրատուրա) մասնագիտական կրթության և 143% գործակիցը՝ հետբուհական մասնագիտական կրթության համար: Նշված գործակիցները հաշվարկվել են հիմնվելով ՀՀ Վիճակագրական ծառայության կողմից 2008թ. իրականացված “Աշխատուժի և ոչ պաշտոնական զբաղվածության ընտրանքային հարցման” արդյունքների վրա:


Ինչպես երևում է աղյուսակից, ընդհանուր ծախսը մարելու համար անհրաժեշտ ժամկետը կազմում է մոտ 8 ամիս՝ միջին մասնագիտական կրթության և մոտ 11 ամիս՝ բարձրագույն կրթության դեպքում: Ավելին, բարձրագույն կրթության և միջին մասնագիտական կրթության շրջանավարտների ակնկալվող տարեկան եկամուտների տարբերությունը կազմում է 365.6 հազար ՀՀ դրամ, մինչդեռ բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության շրջանավարտների մասով կատարված ծախսերի տարբերությունը կազմում է 585.5 հազար ՀՀ դրամ: Սա ենթադրում է, որ բուհի շրջանավարտից կպահանջվի ընդամենը 1.6 տարի՝ ընդհանուր ծախսերի տարբերությունը մարելու համար:

Այս բոլոր ենթադրություններում ու վերլուծություններում հաշվի չի առնված շրջանավարտների շրջանում առկա գործազրկությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս համեմատել սպասվող արդյունքները կատարված ծախսերի նկատմամբ: Նման վերլուծությունը հնարավոր է էլ ավելի հարստացնել՝ ներմուծելով այնպիսի գործոններ, ինչիսիք են «ուսումը սկսելու պահին տնտային տնտեսության եկամտի աստիճանը» և համեմատելով դա ապագա եկամուտների հետ, և այլն:

Ծրագրային ԾԱՎ

Վերլուծության շրջանակները. Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի հիմնում, պետության սուբսիդիաների մեխանիզմի վերանայում և ուսանողական վարկերի ներդրում՝ եկամուտների տարբեր մակարդակներ ունեցող բնակչության խմբերի (քվինտիլների) միջև բարձրագույն կրթության վրա կատարվող պետական ծախսերի բաշխումն ավելի հավասարաչափ իրականացնելու տեսանկյունից:

Հայկական կրթական համակարգի համար վերջերս իրականացված՝ Օգուտների Բաշխման Վերլուծությունը բացահայտել է բարձրագույն կրթությանն ուղղվող պետական սուբսիդիաների՝ բնակչության եկամտային քվինտիլների միջև չափազանց անարդար բաշխում: Ամենաաղքատ քվինտիլը ստացել է նշված սուբսիդիաների մոտ 8%, մինչդեռ ամենահարուստ քվինտիլը ստացել է դրանց 40%:



Այս միտումը ցույց է տալիս բուհեր ընդունվելու համար պատրաստվելու անհավասար հնարավորություններ աղքատների և հարուստների միջև, ինչպես նաև դեպի աղքատներն ուղղված պետական քաղաքականության պակաս՝ բարձրագույն կրթության համար պետական սուբսիդիաների հատկացման գործում:

Սույն երևույթը ենթադրաբար հանդիսանում է ստորև ներկայացված պատճառների համակցված արդյունքը.

- կրթության ցածր որակ ընդհանուր միջնակարգ (12-ամյա կրթություն ապահովող, որոնք ներկայումս առավել մեծ քանակ են կազմում) դպրոցների (հատկապես գյուղական համայնքներում) բարձր դասարաններում (10-12 դասարաններ),
- աղքատամետ բաշխման մեխանիզմների պակաս՝ բուհերի ուսանողներին պետական նպաստների հավասար բաշխման գործում,
- ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից ուսանողների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների բացակայություն:

Բարձրագույն կրթության դեպքում այս մոդելը հեշտ բացատրելի է և հանդիպում է բազմաթիվ, անգամ զարգացած երկրներում, սակայն հայաստանյան պատկերը սոցիալական տեսանկյունից չափազանց ծայրահեղ է դրսևորում: Սա այն ոլորտն է, որտեղ պետական մարմինները պետք է մտահոգվեն համակարգի կողմից ստեղծված՝ աղքատների՝ աղքատ մնալու արատավոր շրջանով:

Ծրագրերի նկարագրություն

Ավագ դպրոցի ծրագիր

Ընդհանուր միջնակարգ դպրոցների, հատկապես գյուղական բնակավայրերում, բարձր դասարաններում կրթության ցածր որակը բերում է բուհերի ընդունելության քննությունները հաջող հանձնելու և բարձրագույն կրթության նպատակով պետական նպաստներ և կրթաթոշակներ ստանալու համար պատրաստվածության մակարդակի ավելի մեծ տարբերությունների՝ ավելի աղքատ և հարուստ ընտանիքների ուսանողների միջև: Դրա պատճառ է հանդիսանում այն փաստը, որ ավելի հարուստ ընտանիքները կարող են իրենց թույլ տալ վարձել մասնավոր դասատուներ՝ իրենց երեխաներին բուհերի քննություններին նախապատրաստելու համար, մինչդեռ ավելի աղքատ ընտանիքները հաճախ չեն կարող դա անել:

Ընդհանուր միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում ուսուցման մակարդակը բարելավելու նպատակով Հայաստանի կառավարությունը որոշել է ստեղծել առանձին գործող ավագ դպրոցների ցանց՝ ընտրելով 150-200 ընդհանուր միջնակարգ դպրոցներ ամբողջ երկրի տարածքում և դրանցում թողնելով միայն բարձր դասարանները (10-12), իսկ մնացած միջնակարգ դպրոցները վերափոխելով հիմնական դպրոցների (1-ից մինչև 9-րդ դասարանների համար): Այս գործընթացը ենթադրում է լայնածավալ ներդրումներ նշված ավագ դպրոցների ենթակառուցվածքներում, նոր դասազրքեր, նոր ուսումնական պլան, ուսուցիչների ուսուցում և որակավորում, ինչպես նաև այդ դպրոցների ընթացիկ ծախսերի

տարբերակված ֆինանսավորում: Մեկ դպրոց ունեցող փոքր և շատ հեռավոր գյուղերը կպահպանեն իրենց ընդհանուր միջնակարգ դպրոցները (1-12 դասարաններ): 2009թ. բուհական ընդունելության քննությունները ցույց տվեցին, որ նոր ստեղծված ավագ դպրոցների շրջանավարտների 64% դիմել է բուհեր և 58% ընդունվել է, մինչդեռ ողջ երկրի համար նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար մոտ 41% և 28%: Այս տեսանկյունից կարևոր գործոն է դառնում դպրոցի կարգավիճակը, այն է ավագ դպրոցում թե ընդհանուր միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում ուսուցանելու փաստը:

Պետական նպաստներ բուհերի ուսանողների համար

Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական նպաստների ներկայիս մեխանիզմը հիմնականում արդյունքների վրա հիմնված մեխանիզմ է, այսինքն՝ նպաստները տրվում են ընդունելության քննության ժամանակ լավագույն արդյունքները ցուցաբերած դիմորդներին: Ավելին, ընդունելության քննություններից առաջ կառավարությունը որոշում է նպաստ ստացողների թիվն ըստ յուրաքանչյուր մասնագիտության և յուրաքանչյուր պետական բուհի: Այս մեխանիզմում կատարված հիմնական բարելավումներից մեկն է հանդիսանում ռոտացիայի սկզբունքի ներդրումը բուհական կրթության բարձր կուրսերում. այժմ նպաստներն անցնում են ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներից՝ լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողներին՝ հիմնվելով քննությունների տարեկան արդյունքների վրա:

Սակայն, ներկայիս՝ առաջադիմության վրա հիմնված պետական նպաստների համակարգը հաշվի չի առնում նպաստ ստացողի ընտանիքի համար դրա իրական կարիքը՝ հանգեցնելով ֆինանսական պատճառներով բուհական ուսումից հրաժարվելուն: Հրաժարվելու նման դեպքերը կարելի է դասակարգել 3 տիպերի. (i) նրանք, ովքեր հեռանում են բուհից ուսման ընթացքում, քանի որ չեն կարող վճարել ուսման վարձերը, (ii) նրանք, ովքեր ընդունվում են բուհեր, սակայն պետական նպաստ չեն ստանում և չեն կարողանում միջոցներ գտնել նույնիսկ առաջին տարվա ուսման վարձի համար և (iii) նրանք, ովքեր չեն դիմում բուհեր՝ միջոցների և պետական նպաստ ստանալու հույսի բացակայության հետևանքով: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է վերանայել այս համակարգը և ներառել ընտանիքի եկամուտի գործոնը և՛ բուհ ընդունվելու փուլում, և՛ ռոտացիոն մեխանիզմում:

Ուսանողական վարկերի պետական ծրագիր

Գոյություն ունի վարձերի՝ ծնողների կողմից վճարումներից և պետական նպաստներից տարբերվող՝ այլ ֆինանսական աղբյուրների պակաս: Որոշ հայկական առևտրային բանկեր վարկեր են տրամադրում ուսանողներին, սակայն դրանք ավելի մոտ են սպառողական վարկերին՝ բարձր տոկոսադրույքներով և այլ պայմաններով, որոնք ցածր եկամուտներ ունեցող ընտանիքներն իրենց թույլ տալ չեն կարող:

Բարձրագույն կրթության ծախսերի, այդ թվում՝ ուսման վարձերի և ուսանելու այլ ծախսերի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրի պակասը լրացնելու նպատակով կարելի է դիտարկել ուսանողական վարկերի այնպիսի սխեմայի ներդրում, որի թիրախը կլինեն ուսանելու գործընթացում իրապես հետաքրքրված անձինք:

Բոլոր երեք քաղաքականության միջամտության տարբերակները հետապնդում են միևնույն նպատակը, այն է նվազեցնել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության կախվածությունը աղքատության աստիճանից: Այս կախվածության լիովին վերացումը անհնարին նպատակ է, սակայն կախվածության ներկայիս խիստ ցավալի մակարդակի նվազեցումը իրատեսական է միջնաժամկետ հեռանկարում:

Ծախսերի մասին տվյալների նկարագրություն

Ավագ դպրոցի ծրագիր

Ավագ դպրոցի ծրագրի ծախսը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.

1. Կապիտալ ծախսերի համար վերլուծվել են 2008 և 2009թթ. փաստացի ծախսերը՝ հետևյալ աղբյուրներից.
 - a. Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված՝ Առաջին կրթության որակի և համապատասխանության ծրագիրը;
 - b. ՀՀ Պետական Բյուջեն;
 - c. Դասագրքերի շրջանառու հիմնադրամը
2. Կիրառվել է կապիտալ ծախսերի հետևյալ բաժանումը.
 - a. Դպրոցների կահույք և սարքավորումներ;
 - b. Գրադարանի գրականություն;
 - c. Դասագրքեր և այլ ուսուցողական նյութեր;
 - d. Ավագ դպրոցների շենքերի վերանորոգում;
 - e. Ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստում:Դասեր c.-ն և e.-ն դիտարկվել են որպես կապիտալ ծախսեր, քանի որ դասագրքերը դպրոցներում օգտագործվում են 4-5 տարի, իսկ ուսուցիչների վերապատրաստումը կիրականացվի 5 տարին մեկ անգամ:

3. Ընթացիկ ծախսերի գնահատման համար օգտագործվել են դպրոցների աշակերտ թվով ֆինանսավորման բանաձևի գործակիցները, որոնք 2009թ. համար սահմանվել են ՀՀ Ֆինանսների նախարարի և ՀՀ Կրթության նախարարի համատեղ որոշումով:
4. Ընդհանուր կրթության ավագ դպրոցի մակարդակի ծախսերի տվյալները վերցվել են Ծրագրային Բյուջետավորման և Օգուտների Բաշխման Վերլուծություններից:

Համալսարանների ուսանողների պետական նպաստներ

Պետական նպաստների ծրագրի ծախսերը իրենցից ներկայացնում են պլանավորված տեխնիկական աջակցության ծախսեր՝ դոնորային ֆինանսավորման միջոցով իրականացվելիք Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ձևաչափի մշակման նպատակով:

Ուսանողական վարկերի պետական ծրագիր

Պետական ուսանողական վարկերի ծրագիրը բաղկացած է ծախսերի երկու տեսակներից.

1. զարգացման տեխնիկական աջակցության ծախսեր և ուսանողական վարկերի համակարգի պիլոտային ծրագիր, որն իրականացվում է դոնորների ֆինանսավորման միջոցներով;
2. վարկառու ուսանողի համար վարկի վերադարձի տարեկան ծախսը՝ գնահատված ուսանողական վարկի սխեմայի դրամական հոսքերի միջոցով:

Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն

Ավագ դպրոցի ծրագիր

Ավագ դպրոցի ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

1. Վերը նշված աղբյուրների և դասերի համար հավաքվել են 2008 և 2009թթ. փաստացի կապիտալ ծախսերը և հաշվարկվել են բոլոր աղբյուրների և դասերի ընդհանուր գումարները;
2. Հաշվարկվել են միավորի ծախսերն ըստ ծախսային դասերի՝ օգտագործելով 2008 և 2009թթ. հիմնադրված ավագ դպրոցների թվաքանակը (37 դպրոց): Այս ծախսերն էքստրապոլացվել են ավագ դպրոցների առավելագույն պլանավորված քանակին (200 դպրոց);
3. Գոյություն ունեցող դպրոցների ֆինանսավորման բանաձևն օգտագործվել է հիմնադրվելիք 200 դպրոցների ընթացիկ ծախսերի գնահատման համար. $Y = A + BN$, որտեղ Y -ը դպրոցների ֆինանսավորման տարեկան գումարն է, A -ն դպրոցի

գործակիցն է, B-ն մեկ ուսանողի հաշվով գործակիցն է, իսկ N-ը՝ ուսանողների քանակը: Նոր ավագ դպրոցների համար կառավարությունը մշակել է նոր գործակից (1.1), որը բազմապատկվում է մեկ ուսանողի հաշվով գործակիցին;

4. Ընդունելով, որ բոլոր 200 ավագ դպրոցները կհիմնվեն 2008-2012թթ. ժամանակահատվածում (5 տարի)՝ յուրաքանչյուր տարվա և ողջ ժամանակահատվածի համար գնահատվել են ընդհանուր ընթացիկ և կապիտալ ծախսերը, ինչպես նաև գնահատվել են միջին տարեկան ծախսերը;
5. Օգտագործելով ԾԲՎ և ՕԲՎ տվյալները՝ հաշվարկվել են նույն ժամանակահատվածի համար ընթացիկ ու կապիտալ ծախսերը և դպրոցների քանակը՝ բազիսային դեպքի համար (չմիջամտելու դեպքի համար): Միջին տարեկան միջամտության ծախսերի և միջին տարեկան բազիսային ծախսերի միջև տարբերությունն ընդունվել է որպես առաջարկվող միջամտության հետ կապված լրացուցիչ տարեկան ծախս:

Բուհերիի ուսանողների պետական նպաստներ

Պետական նպաստների ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

1. Երկրորդ EQ&R ծրագրի շրջանակներում իրականացվելիք՝ Բարձրագույն Կրթության ֆինանսավորման նոր ձևաչափի մշակմանը տեխնիկական աջակցության նպատակով աշխատանքի են ընդունվելու մեկ միջազգային և 2 տեղական փորձագետներ՝ 1 տարի ժամկետով, իսկ առաջարկվող ծախսերը ներառելու են նրանց վարձատրությունը և միջազգային խորհրդատուի ճանապարհորդությունների և կացության ծախսերը, ինչպես նաև մշակված նյութերի թարգմանության համար անհրաժեշտ միջոցները;
2. Գնահատման մեջ ներառվել են նաև մի քանի այլ ծախսեր, ինչպիսիք են՝ նոր ֆինանսավորման ձևաչափի քննարկման նպատակով սեմինարների կազմակերպում, կարիքների գնահատման նպատակով ոլորտային հետազոտություն և իրավական փորձաքննություն՝ իրավական լիազորությունների միջավայրի ուսումնասիրության և գոյություն ունեցող օրենսդրությունում համապատասխան փոփոխություններ առաջարկելու նպատակով;
3. Առաջարկվող ներդրումների մաշվածության համար ընդունվել է 5 տարի ժամկետ և միջամտության տարեկան արժեքի համար կիրառվել է ծախսի 1/5 մասը:

Ուսանողական վարկերի պետական ծրագիր

Ուսանողական վարկերի պետական ծրագրի ծախսերի հաշվարկն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

1. Երկրորդ EQ&R ծրագրի շրջանակներում իրականացվելիք ուսանողական վարկերի մեխանիզմի մշակման և փորձարկման համար տեխնիկական աջակցության նպատակով աշխատանքի են ընդունվել մեկ միջազգային փորձագետ՝ 2 տարի ժամկետով և 3 տեղական փորձագետներ՝ 4 տարի ժամկետով, իսկ առաջարկվող ծախսերը ներառելու են նրանց վարձատրությունը և միջազգային խորհրդատուի ճանապարհորդությունների և կացության ծախսերը, ինչպես նաև մշակված նյութերի թարգմանության համար անհրաժեշտ միջոցները;
2. Գնահատման մեջ ներառվել են նաև մի քանի այլ ծախսեր, ինչպիսիք են՝ նոր ֆինանսավորման ձևաչափի քննարկման նպատակով սեմինարների կազմակերպում, ուսուցողական ճանապարհորդություն 4 մասնագետների համար, կարիքների գնահատման նպատակով ոլորտային հետազոտություն և իրավական փորձաքննություն՝ իրավական լիազորությունների միջավայրի ուսումնասիրության և գոյություն ունեցող օրենսդրությունում համապատասխան փոփոխություններ առաջարկելու նպատակով;
3. Առաջարկվող ներդրումների մաշվածության համար ընդունվել է 5 տարի ժամկետ և միջամտության տարեկան արժեքի համար կիրառվել է ծախսի 1/5 մասը;
4. Դիտարկվել է վարկառու ուսանողի կողմից վարկի վերադարձի տարեկան ծախսը՝ գնահատված ուսանողական վարկի սխեմայով դրամական հոսքերի միջոցով;
5. Կետեր 3 և 4-ում նկարագրված՝ մոտավոր տարեկան ծախսերը գումարվել են՝ Ուսանողական վարկերի պետական ծրագրի ընդհանուր ծախսերը չափելու նպատակով;

Արդյունավետության մասին տվյալների նկարագրություն

Ավագ դպրոցի ծրագիր

Ավագ դպրոցի ծրագրի արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.

1. 2009թ. բուհական ընդունելության քննությունների արդյունքները՝ Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերից և մայրաքաղաք Երևանից առաջին 10 ավագ դպրոցների համար, այդ թվում՝ շրջանավարտների թվաքանակը, բուհ դիմողների և ընդունվածների քանակը, որոնք ստացվել են դպրոցներից՝ փոքր հարցման միջոցով;
2. Նույն տվյալները 2009թ. բուհական ընդունելության քննությունների արդյունքների վերաբերյալ՝ նույն մարզերի բոլոր դպրոցների մասով՝ ստացված Գնահատման և թեստավորման կենտրոնից, որը հանդիսանում է քննությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու գործակալություն:

Բուհերի ուսանողների պետական նպաստներ

Ավագ դպրոցի ծրագրի արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.

1. Տվյալներ այն դիմորդների և ուսանողների վերաբերյալ, որոնք չեն կարողացել սկսել և/կամ շարունակել ուսումը բուհում՝ վարձերը վճարել չկարողանալու պատճառով: Տվյալները ստացվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից:

Ուսանողական վարկերի պետական ծրագիր

Ուսանողական վարկերի պետական ծրագրի արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ տվյալները.

1. Գործունեության առաջին տարվա համար վարկ ստացողների թվաքանակը ստացվել է Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի շրջանակներում Միջազգային Հաշվապահական Ուսուցման Կենտրոնի կողմից 2009թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին իրականացված՝ “Անցումը ավագ դպրոցներից դեպի բարձրագույն կրթական հաստատություններ” Բազիսային Ուսումնասիրության Հաշվետվությունում ներկայացված պահանջարկի գնահատումից:
2. Վարկառուների տարեկան թվաքանակի տոկոսային փոփոխությունները հաջորդ տարիների համար հիմնված են Ուսանողական վարկերի զարգացման թիմի կողմից ընդունված ենթադրությունների վրա:

Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն

Ավագ դպրոցի ծրագիր

Ավագ դպրոցի ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.

1. Հաշվարկվել է շրջանավարտների թվի և դիմորդների և ընդունված ուսանողների թվի տոկոսային հարաբերակցությունը յուրաքանչյուր նորաստեղծ ավագ դպրոցի, յուրաքանչյուր մարզում, բոլոր մարզերում և ամբողջ Հայաստանում նոր ավագ դպրոցների ընդհանուր թվի համար;
2. Բուհական դիմորդների և ընդունվածների մոտավոր լրացուցիչ թիվը հաշվարկվել է նոր ստեղծված ավագ դպրոցների՝ ողջ երկրով մեկ ամբողջական ծածկույթի առկայության դեպքի համար և սա համարվել է սույն քաղաքականության միջամտության արդյունավետության չափման միջոց:

Բուհերի ուսանողների պետական նպաստներ

Բուհերի ուսանողների պետական նպաստների ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.

1. Այն դիմորդների և ուսանողների փաստացի տարեկան թվաքանակը, որոնք չեն կարողացել սկսել և/կամ շարունակել ուսումը բուհում՝ վարձերը վճարել չկարողանալու պատճառով դիտարկվել է այս քաղաքականության միջամտության արդյունավետության չափման միջոց՝ ընդունելով, որ նշված անձինք միջամտության համար գերակա թիրախային խումբ են հանդիսանում:

Ուսանողական վարկերի պետական ծրագիր

Ուսանողական վարկերի ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվել է օգտագործելով հետևյալ մեթոդաբանությունը.

1. Այս քաղաքականության միջամտության համար արդյունավետության չափման միջոց է ընդունվել գործունեության առաջին 5 տարիների ընթացքում վարկառուների միջին տարեկան գնահատված թվաքանակը՝ ընդունելով, որ առաջին տարվա մասնակիցների թվաքանակը և հաջորդող տարիների տոկոսային փոփոխությունները կիրականանան:
2. Ստորև տրված աղյուսակը ներկայացնում է առաջարկվող ՈՒՎ մոդելում ընդունված հիմնական ենթադրությունները.

Աղյուսակ 2: Ուսանողական վարկերի տարբերակի մոդելի համար ընդունված ենթադրությունները

Ուսանողների ներգրավվածությունը վարկային համակարգում	
Վարկառուների թիվն առաջին տարում	700
Վարկառուների թվի տարեկան տոկոսային աճը	5%
Վարկային ծրագրից դուրս գալու գործակիցն առաջին տարվա համար	10%
Վարկային ծրագրից դուրս գալու գործակիցը երկրորդ տարվա համար	5%
Վարկային ծրագրից դուրս գալու գործակիցը երրորդ տարվա համար	2%
Վարկի պայմաններ	
Ուսանողին տրամադրված վարկի միջին տարեկան մեծությունը, ԱՄՆ դոլարով	\$ 3,000
Ուսման տևողությունը, տարիներ	4
Տարեկան տոկոսադրույք	5%
Վարկի վերադարձի ժամկետ, տարիներ	10
արտոնյալ ժամանակաշրջան, տարիներ	1
Կառավարության կողմից ներգրավվելիք միջոցների արժեքը, այդ թվում՝ վարչական ծախսերը	3%
Վարկի վերադարձ	
Վերադարձելիության գործակիցը	95%
Վերադարձելիության գործակիցը՝ ծրագրից առաջին տարում դուրս եկողների համար	90%
Վերադարձելիության գործակիցը՝ ծրագրից երկրորդ տարում դուրս եկողների համար	85%

Համեմատված տարբերակների/ծրագրերի ամփոփ նկարագրություն

Ստորև տրված աղյուսակը ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն ծրագրերի, դրանց նպատակների, արժեքների և արդյունավետության չափման միջոցների մասին:

Աղյուսակ 3. Քաղաքականության տարբերակների ամփոփում

Ծրագրեր	Ծրագրի նպատակը (ները)	Ընդհանուր արժեքը հազ. դրամ	Արժեքի մասին տվյալներ	Արդյունավետության չափման միջոց	“Ազդեցության” փոփոխականը
A. Ավագ դպրոցների արդյունավետ և հասանելի համակարգ	Բարելավել ավելի աղքատ ընտանիքներից եկող դիմորդների պատրաստվածությունը բուհական ընդունելությանը և ուսմանը	2,351,428	ԾԲՎ, ՕԲՎ, այլ	Ավելի աղքատ ընտանիքների ց ուսանողների լրացուցիչ թվաքանակը	Բարձրագույն կրթությանը տրամադրվող պետական սուբսիդիաների ավելի հավասար բաշխում
B. Պետական նպաստների՝ կարիքների վրա հիմնված համակարգի ներդրում	Ավելացնել ավելի աղքատ ընտանիքներից եկող դիմորդների և ուսանողների մատչումն ուսման պետական նպաստներին	14,411	ԾԲՎ, ՕԲՎ, այլ	Ավելի աղքատ ընտանիքների ց ուսանողների լրացուցիչ թվաքանակը	Բարձրագույն կրթությանը տրամադրվող պետական սուբսիդիաների ավելի հավասար բաշխում
C. Ուսանողական վարկերի համակարգի ներդրում	Տրամադրել լրացուցիչ և մատչելի ֆինանսավորում կարիքավոր և ուսման հզոր շարժառիթներ ունեցող անձանց	1,305,666	ԾԲՎ, ՕԲՎ, այլ	Ավելի աղքատ ընտանիքների ց ուսանողների լրացուցիչ թվաքանակը	Բարձրագույն կրթությանը տրամադրվող պետական սուբսիդիաների ավելի հավասար բաշխում

Ինչպես ցույց է տրված աղյուսակում, բոլոր 3 ծրագրերի ընդհանուր նպատակն է բարելավել դիմորդների և ուսանողների մատչումը բարձրագույն կրթությանը նվազեցնելով եկամտի աստիճանից կախվածությունը: Բոլոր 3 ծրագրերի արդյունավետության չափման միջոցը նույնն է. ավելի աղքատ ընտանիքներից ուսանողների լրացուցիչ թվաքանակ (օգտվելու

գերակա իրավունքով): Սակայն ծրագրերը տարբերվում են գործունեության ոլորտներով, ծածկույթով և ֆինանսական արդյունքներով:

ԾԱ գործակցի արդյունքները

Ստորև ներկայացված աղյուսակում տրված է ԾԱ վերլուծության արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն՝ ծրագրի ծածկույթի, ընդհանուր ծախսերի և խնայողությունների, ինչպես նաև առաջարկվող ծրագրերի ԾԱ գործակիցներ վերաբերյալ:

Աղյուսակ 4. Քաղաքականության տարբերակները և դրանց հիմնական տնտեսական պարամետրերը

Քաղաքականության տարբերակներ	Ծածկույթ /շահառուներ	Միջամտության ընդհանուր արժեքը, հազ. ՀՀ դրամ	Խնայողություն, հազ. ՀՀ դրամ	Միջամտության զուտ արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ծ/Ա գործակից, հազ. ՀՀ դրամ
Տարբերակ 1. ավագ դպրոցների ցանցի ստեղծում (ընդամենը 60000 աշակերտ)	5,153	10,013,420	7,661,991	2,351,428	456
Տարբերակ 2. ԲԿ ֆինանսավորման մեխանիզմների վերանայում	100	14,411	0	14,411	144
Տարբերակ 3. Ուսանողական վարկերի սխեմայի մշակում և ներդրում	1,934	1,305,666	0	1,305,666	675

Արդյունքների նախնական քննարկում

Ինչպես ներկայացված է վերը բերված աղյուսակում, Տարբերակ 2-ն ունի ամենացածր Ծ/Ա գործակիցը, սակայն այն նաև ունի շահառուների ամենափոքր ծածկույթը: Ֆինանսական խնդիրների պատճառով ԲՈՒՀ-երից դուրս մնացողների քանակը բավականին ցածր է:

Տարբերակ 3-ը շատ ավելի մեծ ծածկույթ ունի, սակայն նաև շատ ավելի թանկ է, քանի որ այն ենթադրում է վարկերի վերադարձի ծախսեր ուսանողների կողմից:

Տարբերակ 1-ն ունի շահառուների շրջանում ամենամեծ ծածկույթը և Ծ/Ա գործակցի միջին ցուցանիշ: Այսպիսով այն կարող է դիտարկվել որպես ամենաարդյունավետ գործիքը՝ բարձագույն կրթությանն աղքատների մատչումը բարձրացնելու համար: Սակայն, դա չի ենթադրում, որ բոլոր միջոցները կարող են ուղղվել այս տարբերակին, քանի որ ենթադրվում է, որ գնահատված ծածկույթը կլինի իր առավելագույն հնարավոր մակարդակի վրա՝ ավագ դպրոցի տարիքի բնակչության թվաքանակի բնական սահմանափակման պատճառով:

Հակառակը, բոլոր 3 տարբերակների համակցված ազդեցությունը կարելի է դիտարկել որպես ամենաարդյունավետ ձևը՝ բարձագույն կրթությանն աղքատների մատչումը բարձրացնելու համար, այդպիսով հանգեցնելով բարձրագույն կրթությանն ուղղվող պետական սուբսիդիաների ավելի արդար բաշխմանը եկամտային քվինտիլների միջև՝ հատկապես հաշվի առնելով, որ կառավարությունն արդեն միջոցներ և ջանքեր է ներդրել բոլոր 3 ծրագրերի իրականացման համար:

Հաջորդ նախնական զեկույցում հնարավոր ընդլայնումների և փոփոխությունների ծրագրեր

Այն դեպքում, եթե նոր հետազոտություն իրականացվի նոր ստեղծված 37 ավագ դպրոցների շրջանում, որոնք 2010թ. բուհական ընդունելության քննությունների համար շրջանավարտներ են տվել, ապա սույն հաշվետվության տվյալները կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով դպրոցների և քննությունների մասին ավելի թարմ և ընդգրկուն տվյալները: Սա նաև հնարավորություն կտա համեմատել թվով 10 դպրոցների մասով 2009թ. քննական շրջանի համար արդեն իսկ վերլուծված քննությունների արդյունքները:

Ուսանողական վարկերի նկատմամբ պահանջարկի շուկայական հետազոտությունը նույնպես կարող է տրամադրել թարմացված տվյալներ այս ծրագրում առաջարկվող մասնակցության մասին, ինչպես նաև փորձարկել ՌԻՎ մոդելում տեղ գտած ենթադրություններն ավելի մեծ ընտրանքների դեպքում: Եթե նման հետազոտություններ կատարվեն, ապա մեր ենթադրություններն ավելի հիմնավորված կլինեն կամ անհրաժեշտություն կլինի դրանք ճշգրտել՝ նշված հետազոտությունների արդյունքներն արտացոլելու նպատակով:

Ի վերջո, ավելացած մատչման ազդեցությունը կարող է գնահատվել յուրաքանչյուր եկամտային քվինտիլի համար և կարող է իրականացվել օգուտների նոր առաջարկվող բաշխում՝ որպես ծրագրված միջամտությունների ցանկալի արդյունքների չափանիշ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ

Առողջապահության ոլորտի ծախսային արդյունավետության վերլուծությունները կենտրոնացած են եղել հղի կանանց ամբուլատոր-պոլիկլինիկական մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծրագրի վրա: Այս ծրագրի ընտրությունը հիմնված է եղել կառավարության առողջապահական քաղաքականության գերակայության վրա: 2008թ. կառավարությունը նախաձեռնեց մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ոլորտի բարեփոխումներ և ավելացրել պետական բյուջեի հատկացումներն այս ծրագրին: Այդ տարվանից սկսած ներդրվել են սերտիֆիկացման մեխանիզմներ: Բոլոր հղիները ստանում էին ծննդօգնության հավաստագրեր, որոնք երաշխավորում էին ծննդաբերության անվճար բժշկական ծառայություններ ողջ երկրում: Մինևույն ժամանակահարկ է նշել, որ մայրական առողջության պահպանման բարելավումը Հազարամյակի Ջարգացման Նպատակների թիրախային կետերից մեկն է, որը ներառում է.

- 1990 -2015թթ. միջև ընկած ժամանակահատվածում երեք քառորդով կրճատել մայրական մահացության մակարդակը (-մայրական մահացության մակարդակ, -որակավորված բժշկական անձնակազմի կողմից ընդունված ծննդաբերությունների համամասնություն),
- 2015թ. հասնել վերարտադրողական առողջության ունիվերսալ մատչելիությունը (-հակաբեղմնավորիչների տարածվածության մակարդակ, պատանեկան ծնունդների մակարդակ, նախաձննդյան բժշկական օգնության ծածկույթ (առնվազն մեկ և առնվազն չորս այցելություն), ընտանիքի պլանավորման չբավարարված պահանջ):

Վերարտադրողական և մայրական առողջապահությունը Հայաստանում իրականացվում է ամբուլատոր պոլիկլինիկաների և հիվանդանոցների լայնածավալ համակարգի միջոցով: Ամբուլատոր առողջապահության ցանցը կառուցված է ըստ աշխարհագրական շրջանների և ծառայությունները մատուցվում են պոլիկլինիկաների կանանց խորհրդատվության և գյուղական առողջապահական կառույցների միջոցով: Մանկաբարձական բժշկական օգնությունն իրականացվում է հիվանդանոցների մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքներում, քաղաքային բնակավայրերում գտնվող տարածաշրջանային ծննդատներում և բարձր մասնագիտացված բժշկական օգնության հանրապետական կենտրոններում:

Ուսումնասիրության համար օգտագործված տվյալները ստացվել են հանրային աղբյուրներից, մի շարք առնչվող հաշվետվություններից և փորձագիտական

քննարկումներից. ՀՀ Պետական բյուջեի մասին օրենքներ, ՄԺԾՑ³, ՀԺԱՀ-2005⁴, դոնոր կազմակերպությունների հաշվետվություններ և ԱՍՏ (AST)-ի՝ 2009թ. իրականացրած հետազոտության տվյալներ:

Բժշկական օգնությունը, որն ապագա մայրը ստանում է հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ կարևոր է մոր և երեխայի փրկության և առողջության համար: Նախածննդյան օգնությունը (ՆԾՕ) նկարագրված է ըստ օգնություն տրամադրողի(բուժճառայություն մատուցողի) տեսակի, ՆԾՕ այցելությունների քանակի, այցելությունների պահի դրությամբ հղիության փուլերի, ինչպես նաև ըստ ՆԾՕ-ի ընթացքում տրամադրված ծառայությունների և տեղեկատվության:

Համաձայն ՀԺԱՀ-2005-ի՝ հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց 93%-ն առնվազն մեկ անգամ ստացել է նախածննդյան բժշկական օգնություն բժշկի (90%) կամ բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու կողմից (3 %): Քաղաքային համայնքներում կանանց 94%-ն օգնություն է ստացել բժիշկներից, իսկ 2%-ը՝ բուժքույրերից կամ որակավորված մանկաբարձուհիներից: Գյուղական շրջաններում կանանց 83%-ն օգնություն է ստացել բժիշկներից, իսկ 6%-ը՝ բուժքույրերից կամ որակավորված մանկաբարձուհիներից:

Համարյա բոլոր շրջաններում տասը մայրերից առնվազն ինը նախածննդյան օգնություն են ստացել որակավորված մասնագետից: Սակայն, Շիրակի մարզում որակավորված մասնագետի կողմից (բժիշկ, բուժքույր կամ մանկաբարձ) նախածննդյան օգնություն են ստացել մայրերի միայն 78%-ը, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 74%-ը⁵:

2000թ. ՀԺԱՀ-ին հաջորդող հինգ տարիների ընթացքում զգալի աճ է գրանցվել նախածննդյան օգնության ծածկույթում. բժիշկի կողմից ստացված օգնությունն աճել է 84%-ից մինչև 90%, մինչդեռ բուժքրոջ կամ մանկաբարձի կողմից ստացված օգնությունը նվազել է 9%-ից մինչև 3%:

Ելնելով ՀԺԱՀ 2005-ից՝ այն կանանց 71%-ը, որոնք կենդանի ծնունդ են ունեցել հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում, կատարել են չորս կամ ավելի նախածննդյան օգնության այցելություններ՝ իրենց ամենավերջին ծննդի համար: Այստեղ առկա է զգալի շեղում քաղաքային և գյուղական շրջանների միջև: Այն կանանց տոկոսը, որոնք չորս և ավելի նախածննդյան օգնության այցելություններ են կատարում շատ ավելի փոքր է գյուղական շրջաններում, քան՝ քաղաքային շրջաններում (53% համեմատ 82%-ի):

³ ՄԺԾՑ– Միջնաժամկետ Ծախսային Ծրագիրը եռամյա բյուջետային պլանավորման փաստաթուղթ է, որը ներառում է ծրագրային ռազմավարություններ և ֆինսկալ պարամետրեր:

⁴ Հայաստանի ժողովրդագրության և առողջապահության հարցերի հետազոտություն, ADHS

⁵ Մրանք երկրի տասը մարզերից 2-ն են

Ընդհանուր առմամբ, քաղաքաբնակ կանայք իրենց առաջին ՆԾՕ այցելությունը կատարում են ավելի շուտ քան գյուղաբնակ կանայք: Քաղաքաբնակ կանանց կեսից ավելին (51%) իրենց առաջին նախաձեռնության այցելությունները կատարում են հղիության առաջին չորս ամիսների ընթացքում, համեմատած գյուղաբնակ կանանց 43%-ի հետ: ՆԾՕ ընթացքում հղիության բարդությունները բացահայտվում են 50.7% դեպքերում՝ քաղաքային և 38.2% դեպքերում՝ գյուղական շրջանների համար:

Ոլորտում իրականացվող կառավարության քաղաքականությունը և գործունեությունը ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. Մոր և մանկան առողջապահության ռազմավարությունը 2003-2015թթ. , Վերարտադրողական առողջության բարելավման Ազգային ծրագիր 2007-2015թթ. , Կառավարության գործունեության ամենամյա ծրագիր, 2009-2011թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագիր (ՄԺԾԾ), 2008թ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (ԱՀՌԾ), կառավարության որոշումներ և այլ ոլորտային փաստաթղթեր:

Համաձայն 2009-2011թթ. ՄԺԾԾ-ի՝ մայրական առողջապահության առավել համապատասխանող նպատակները հետևյալն են.

- բարձրացնել մանկաբարձական ծառայությունների հասանելիությունը՝ կրճատելով մայրական մահացությունն առնվազն 20%-ով:
- բարելավել հղի կանանց մատուցվող մինչձննդաբերական ծառայությունների որակը՝ բարձրացնելով հղիների ընդգրկվածության ցուցիչը 30%-ով:
- Ապահովել հղիների ՄԻԱՎ սքրինինգի ներգրավվածությունը նվազագույնը 90%-ով:
- Ընդլայնել վերարտադրողական օրգանների քաղցկեցի կանխարգելման ծրագրերը, ապահովելով 30% ներգրավվածություն սքրինինգին:

Վերը նշված փաստաթղթում, ինչպես նաև Վերարտադրողական առողջապահության բարելավման Ազգային ծրագրում կանանց մատուցվող նախաձեռնության ծառայությունների բարելավումը սահմանված է որպես գերակա:

Գոյություն ունեն նաև արտասահմանյան դոնոր ծրագրեր, որոնք մայրական առողջության խնամք են կատարում ուղղակիորեն կամ ծրագրերի ենթատեքստում: Ստորև նկարագրված են դրանցից երկուսը.

Մոր և մանկան առողջության բարելավման ծրագիր (NOVA 2/USAID). NOVA 2 ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ՀՀ Կառավարությանն՝ առկա մարտահրավերներին

դիմակայելու և մոր ու երեխայի առողջության, վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման գործընթացների որակը բարելավելու ջանքերին: Ծրագիրը հասնելու է այս նպատակներին՝ առողջապահական ծառայություններ մատուցողների գիտելիքների և ունակությունների լավացման, առողջապահական հիմնարկների ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավման, որակի ապահովման համակարգի ինստիտուցիոնալացման, ընդհանուր կառավարման և վերհսկողության հզորացման միջոցով, ինչպես նաև կրթելով և մոբիլիզացնելով գյուղական և կիսա-գյուղական համայնքներին՝ կանխարգելման և համապատասխան օգնություն փնտրելու գործում:

Առաջնային առողջապահության բարեփոխման (PHCR/USAID) ծրագիր. Այս ծրագիրն աջակցում է ՀՀ կառավարությանը/ՀՀ Առողջապահության նախարարությանը՝ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բարեփոխում իրականացնելու և Հայաստանում կայուն, բարձրորակ առողջապահական ծառայություններ կիրառելու գործում: Ծրագիրն ունի վեց բաղադրիչ. (1) առողջապահական բարեփոխում և քաղաքականության օժանդակություն (ներառյալ կառույցների վերանորոգում և սարքավորումներով հագեցում), (2) բաց ընդունելություն, երբ Հայաստանի ցանկացած քաղաքացի իրավունք ունի ընտրել իրեն առողջապահական ծառայություններ մատուցողին, (3) ընտանեկան բժշկություն, (4) առողջապահության ֆինանսավորում, (5) հանրային առողջության վերաբերյալ ուսուցում և (6) որակի ապահովում: Ծրագիրն ընդլայնվելու է, որպեսզի ներառի ամբողջ երկիրը:

Ծախսերի մասին տվյալների նկարագրություն

Կառավարությունը ֆինանսավորում է հղի կանանց առողջապահական ծրագրերը (առողջապահության պետական բյուջետային ֆինանսավորման շրջանակներում) նպատակ ունենալով, որպեսզի նրանք ստանան պահանջվող քանակի ամբուլատոր մանկաբարձ-գինեկոլոգիական խորհրդատվություն և լաբորատոր ու բժշկական սարքավորումներով հետազոտություններ: Վերը նշված ծրագիրն ամենակարևորներից մեկն է և դրա մասին են վկայում նաև մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները: Ծրագրի գերակայության մասին է վկայում ստորև ներկայացված աղյուսակը՝ որտեղ 2006-2010թթ. ժամանակահատվածում հղիության հետ առնչվող առողջապահական ծրագրերին կատարվող հատկացումները կրկնապատկվել են, մինչդեռ բոլոր այլ ծրագրերի աճը եղել է շատ ավելի դանդաղ:

Աղյուսակ 5: Պետական բյուջեից ֆինանսավորվող առողջապահական ծրագրեր

հազար ՀՀ դրամով	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ. (բյուջետավորված)	2010 (մոտավոր)
Բնակչության առողջության առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) պահպանման ծառայություններ	13,336,353	15,606,114	18,280,513	24,106,798	19,861,476
Մանկաբարձ-գինեկոլոգիական բժշկական ծառայություններ	3,015,199	3,266,005	5,108,887	8,167,484	7,228,845
Հիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ	12,604,188	13,941,868	14,889,779	16,796,179	15,141,589
Հանրային առողջապահական ծառայություններ	1,934,555	2,921,995	2,829,200	3,038,393	2,796,361
Պարաբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ	7,789,352	10,073,645	12,454,542	12,835,470	9,065,701
Քաղաքականության մշակում և վարչարարություն	730,537	844,105	910,534	1,143,287	1,080,977

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ամփոփ տվյալներ առողջապահական ընդհանուր ծախսերում պետության և տնային տնտեսությունների համեմատական մասնաբաժինների վերաբերյալ՝ ըստ սույն հաշվետվությունում սահմանված ծրագրերի: Ցավոք տվյալները հասանելի են միայն 2008թ. համար (ինչը մեր սեփական ուսումնասիրության արդյունք է, քանի որ դինամիկ պատկեր ստանալու համար ոչ մի արտաքին աղբյուր հասանելի չէր): Ինչևէ, նույնիսկ նշված մեկ տարվա կտրվածքով նկատելի է, որ պետությունը համարյա բոլոր ծրագրերում առանցքային դեր ունի առողջապահական ծառայությունների մատուցման մասով, հատկապես՝ առողջության

առաջնային պահպանման և մանկաբարձ-գինեկոլոգիական ծառայությունների ուղղությամբ, որտեղ կառավարությունը հայտարարել է աջակցության առաջնահերթություն:

Աղյուսակ 6: Առողջապահական ծրագրերն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2008թ.

հազար ՀՀ դրամով	Ծախսեր			ընդհանուրի %	
	Պետություն	SS	Ընդամենը	Պետություն	SS
Բնակչության առողջության առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) պահպանման ծառայություններ	18,280,513	9,587,080	27,867,593	66%	34%
Մանկաբարձ-գինեկոլոգիական բժշկական ծառայություններ	5,108,887	1,371,330	6,480,217	79%	21%
Հիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ	14,889,779	17,179,516	32,069,295	46%	54%
Հանրային առողջապահական ծառայություններ	2,829,200	2,139,454	4,968,654	57%	43%
Պարաբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ	12,454,542	297,146	12,751,688	98%	2%
Քաղաքականության մշակում և վարչարարություն	910,534	-	910,534	100%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ	54,473,455	30,574,527	85,047,982	64%	36%

Ներկայիս քաղաքականության մոտեցման ծախսային արդյունավետության նպատակներից ելնելով սույն հաշվետվությունը ներկայացնում է լրացուցիչ երեք քաղաքականության տարբերակներ, որոնք կարելի է հաշվի առնել ներկա քաղաքականության բարելավման քննարկումների ընթացքում:

Այսպիսով, վերլուծվել են ընդհանուր թվով չորս տարբերակներ (ներառյալ ստատուս քվոն) և տրվել է դրանց ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը: Բոլոր տարբերակներում հղում է կատարվում գյուղական շրջանների հղի կանանց, քանի որ նրանք նույնականացվել են որպես ոչ պատշաճ մինչծննդաբերական բուժօգնություն ստանալու ամենաբարձր ռիսկային խմբի շահառուներ: Բոլոր նոր քաղաքականության տարբերակներն ունեն նույն ընդհանուր նպատակը, այն է՝ բարձրացնել գյուղական շրջանների հղի կանանց մատչումը մինչծննդաբերական ծառայություններին:

1. Տարբերակ 1: Ստատուս քվո՝ առաջարկվող ֆինանսական արդյունավետության փոքր բարելավումներով:

2. Տարբերակ 2: Որակյալ ծառայություններ ստանալու նպատակով տարածաշրջանային ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հասնելու՝ կանանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:
3. Տարբերակ 3: Տարածաշրջանային ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից մասնագիտացած անձնակազմի տնային այցելություններ համայնքներում՝ որակավորված ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով:
4. Գյուղական համայնքներ այցելության միջոցով բարձրորակ ծառայություններ մատուցելու նպատակով մասնագիտացած շարժական ծառայության ստեղծում:

Առաջին տարբերակի ծախսերի մասին տեղեկատվությունը հիմնված է այս ծրագրի ծախսերի մասով պետական բյուջեից տրված տեղեկատվության վրա: Հնարավոր խնայողությունները սահմանելու համար օգտագործվել է այցելությունների փաստացի քանակը:

Նոր քաղաքականության տարբերակների համար մենք սահմանել ենք յուրաքանչյուր տարբերակի քաղաքականության միջամտության մոդելը և հաշվարկել երբ ծախսերը՝ օգտագործելով ծառայություններից օգտվելը մակարդակի մասին գոյություն ունեցող տվյալների և ենթադրությունների մի խառնուրդ:

Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն

Տարբերակների համեմատության հիմքում ընկած է դրանց ընդհանուր ծախսային էֆֆեկտը կառավարության բյուջեի վրա, իսկ մոտավոր արժեքները հաշվարկված են հիմնվելով հետևյալ տվյալների վրա.

- Ներկա այցելությունների միջին գնահատված քանակը,
- փաստացի վճարումները – կառավարության հատկացումները ծառայություններին,
- ակնկալվող ընթացիկ և կապիտալ ծախսերը,
- ծառայության այցելությունների քանակները:

Կառավարության վիճակագրությունը չի արտացոլում հղիների՝ մանկաբարձագինեկոլոգիական խորհրդատվություն այցելությունների փաստացի թիվը, սակայն այդ մասով որոշ տեղեկատվություն են տրամադրում փորձագետների գնահատականները և հետազոտությունները: Օրինակ, “Արմավիրի զարգացման կենտրոնի” կողմից 2009թ. պատրաստված “Պետական հավաստագրերի ներդրման գնահատում” հաշվետվությունը ցույց է տվել նախաձեռնության այցելությունները գյուղական շրջաններում շուրջ 40%-ով ավելի

պակաս են քան քաղաքային շրջաններում: ՀԺԱՀՀ-2005 նույնպես տրամադրում է նմանատիպ տեղեկատվություն:

Նախաձեռնության խորհրդատվությանն այցելությունների ցածր թվի և մանկական մահացության և հիվանդացության արդյունքների ցուցանիշների միջև մեր երկրում կորելյացիայի աստիճանի վերաբերյալ գնահատական գոյություն չունի, սակայն ակնհայտ է, որ հղի կանանց անբավարար հսկողությունը բարձրացնում է ուշ փուլի ախտորոշման, լաբորատոր հետազոտությունների և բժշկական օգնության հետ կապված պաթոլոգիաների դիսկը: Այսպիսով, քաղաքականության տարբերակների արդյունքներն սույն հաշվետվությունում քանակապես սահմանված չեն՝ համապատասխան էմպիրիկ տվյալների պակասի պատճառով, սակայն նախաձեռնության ծառայությունների քանակի/որակի և ծննդաբերության ու առողջապահության ցուցանիշների միջև դրական կորելյացիան անժխտելի է:

Արդյունավետության մասին տվյալների նկարագրություն

1. Տարբերակ 1: Ստատուս քվոի դեպքում կատարվող փոփոխություններ

Ոչինչ չի փոխվում և կառավարությունը շարունակում է գոյություն ունեցող մանկաբարձա-գինեկոլոգիական ամբուլատոր-պոլիկլինիկական ծրագրի իրականացումը: Սակայն, հնարավոր է կատարել խնայողություններ, քանի որ կառավարությունը ծառայությունների է գնում երկրի բոլոր հղի կանանց համար, մինչդեռ նրանցից շատերը փաստորեն ծառայություն չեն ստանում (հասանելիության կամ այլ պատճառներից ելնելով): Ամեն դեպքում, կառավարությունը կարող է ներդնել առավել ուղղակի կապերով համակարգ, որը գրանցում է այցելությունների փաստացի քանակը և հիվանդանոցներին միջոցները փոխհատուցում է միայն փաստաի կատարված այցելությունների դիմաց (ի տարբերություն ներկայումս օգտագործվող՝ կոնկրետ շրջանում գրանցված հղի կանանց ընդհանուր թվի, որը սպասարկում է տրված հիվանդանոցը): Այսպիսով, կարելի է կատարել ոչ կրիտիկական, բայց զգալի խնայողություններ:

2. Տարբերակ 2: Տրասպորտային ծախսերի փոխհատուցում

Գյուղական վայրերի կանանց համար ամբուլատոր ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով կանայք ստանում են սուբսիդիաներ տրանսպորտային վճարների համար:

Այս տարբերակում գնահատվել է համայնքներից շրջանային կենտրոններ այցելությունների ծախսը, մասնավորապես միայն փոփոխական ծախսերը(տրանսպորտային ծախսի փոխհատուցումը) :

3. Տարբերակ 3: Տնային այցելություններ

Կազմակերպել մասնագետ բժիշկների կանոնավոր այցելություններ գյուղական վայրեր՝ նրանց տրասպորտային ծախսերի փոխհատուցումով՝ հղի կանանց համար բժշկական ծառայությունների ավելի լայն ծածկույթ և հասանելիություն ապահովելու նպատակով: Այս տարբերակի ծախսերի հաշվարկի ժամանակ ընդունված ենթադրությունները տարբերվում են վերը ներկայացվածից, քանի որ մենք հաշվարկել ենք հղի կանանց միջին թիվը միջին գյուղական համայնքում: Այդպիսով, մեկ շահառուի հաշվով տրասպորտի ծախսն այժմ ավելի ցածր է:

4. Տարբերակ 4: Բարձրորակ շարժական ծառայություններ տանը

Նախնական ախտորոշման սարքավորումներ ունեցող մի քանի շարժական բժշկական կենտրոնների (մեքենաների) ձեռքբերում, ինչը հնարավորություն կտա արհեստավարժ բժշկական անձնակազմին գյուղական շրջաններ կանոնավոր այցելություններ կատարելու՝ գյուղական շրջանների կանանց բարձր որակավորմամբ, հասանելի բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

Ենթադրվում է, որ տարբերակներ 3-ի և 4-ի դեպքում բոլոր հղի կանայք կկարողանան օգտվել նախաձննդյան ծառայությունների ամբողջական փաթեթից: Մասնավորապես, նշված 3-րդ և 4-րդ տարբերակների նպատակն է՝ ապահովել ծառայությունների սպառման (այցելությունների) ամբողջական ծածկույթ: Այլ կերպ ասած, միջամտության արդյունքում շեշտակիորեն կավելանա նախաձննդյան այցելությունների թիվը: 2-րդ տարբերակի դեպքում հղի կանանց թիվը մոտավոր է, քանի որ այցելությունների ամբողջական մասշտաբն ապահովված չէ:

Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն

Արդյունավետությունը չափվում և գնահատվում է հիմնվելով գյուղական շրջանների հղի կանանց թվի վրա, որոնք ստանում են մինչձննդաբերական ծառայությունների ամբողջական փաթեթ՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ քաղաքականության տարբերակների շրջանակներում:

Ծախս/Արդյունք գործակցի արդյունքները

Հաշվարկված տարբերակների արդյունքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 7: Ծախսային արդյունավետության գործակցի հաշվարկն ըստ յուրաքանչյուր տարբերակի

Քաղաքականության տարբերակներ	Ծածկույթ/ շահառուներ	Միջամտության ընդհանուր արժեքը, հազ. դրամ	Խնայողություն, հազ. դրամ	Միջամտության զուտ արժեքը, հազ. դրամ	Ծ/Ա գործակից , հազ. դրամ
Տարբերակ 1: Ստատուս քվոի դեպքում կատարվող փոփոխություններ	15,000	-	30,340	(30,340)	-2.02
Տարբերակ 2: Տրասպորտային ծախսերի փոխհատուցում	15,000 ⁸	120,000	-	120,000	8.00
Տարբերակ 3: Տնային այցելություններ	15,000	266,718	182,039	84,680	5.65
Տարբերակ 4: Բարձրորակ շարժական ծառայություններ տանը	15,000	350,718	182,039	168,680	11.25

Ներկայացված աղյուսակը դիտարկում է այլընտրանքները շահառուներին (հղի կանանց) դիտարկելով որպես քաղաքականության միջոցառման «արդյունք»: Սակայն, վերլուծությունը ներկայացնելու տեսանկյունից առավել շահավետ է փոխարկել այդ արդյունքի բովանդակությունը «այցելությունների քանակ» չափման միավորով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում ներկայիս քաղաքականության ծածկույթի խնդիրը ոչ թե ներգրավված կանանց քանակը, այլ նրանց կողմից բավարար չափով այցելությունների պակասը և այս հաշվետվության նպատակն է ոչ թե ներգրավել լրացուցիչ շահառուների, այլ

⁸ Մասնակցության աստիճանը դժվար է կանխատեսել (առավել հավանակն է, որ այն նվազ կլինի 100%-ից): Մասնակցության տարբեր սցենարներ կարող են կիրառվել (10%, 25%, 50%, 75% և 100%)։ Այնուամենայնիվ, այդ սցենարները այստեղ ներկայացված չեն, քանի որ ազդեցությունը գծային կախվածության մեջ է և այն կանդրադառնա միայն ֆինանսավորման ծավալի, բայց ոչ Ծ/Ա գործակցի վրա

գյուղական վայրերում շահառուների այցելությունների աստիճանը մոտեցնել քաղաքաբնակ շահառուների այցելությունների քանակին:

Այդ իսկ պատճառով ուսումնասիրված այլընտրանքները ստորև ներկայացվում են փոխակերպված տեսքով՝ որպես «արդյունքի» չափման միավոր դիտարկելով «լրացուցիչ այցելությունները»: Առաջին հերթին շահառուների քանակը վերափոխվել է այցելությունների քանակի, այնուհետև, հաշվարկեով ներկա մակարդակի ու նպատակային ցուցանիշի տարբերությունը ներկայացվել է լրացուցիչ այցելությունների (այն նպատակով, որ այդ աղյուսքի չափը հավասարեցվի քաղաքաբնակ շահառուների կողմից այցելությունների քանակի հետ) ու ծախսերի համեմատականը Ծ/Ա գործակցով:

Table 8 Արդյունավետության հաշվարկը այցելությունների քանակով

Քաղաքականության տարբերակներ	Ծածկույթ/ այցելություն	Միջամտության զուտ արժեքը, հազ. դրամ	Ծրագրի ընդհանուր արժեքը, հազ. դրամ	Սահմանային Ծ/Ա գործակից, հազ. դրամ	Ծրագրի Ծ/Ա գործակից, հազ. դրամ
Տարբերակ 1: Ստատուս քվոի դեպքում կատարվող փոփոխություններ	75,000	(30,340)	151,699	n/a	2.02
Տարբերակ 2: Տրասպորտային ծախսերի փոխհատուցում	120,000	120,000	302,039	2.67	2.52
Տարբերակ 3: Տնային այցելություններ	120,000	84,680	266,718	1.88	2.22
Տարբերակ 4: Բարձրորակ շարժական ծառայություններ տանը	120,000	168,680	350,718	3.75	2.92

Բերված աղյուսակում ներկայացված են լրացուցիչ նախաձեռնության այցելությունների քանակը և ծախսերը: Համաձայն էքսպերտային գնահատականի (ինչպես նաև վերը նշված հղումներում հաշվետվությունների), գյուղական վայրերում միջին այցելությունները կազմում են 5, իսկ քաղաքային վայրերում՝ 8: Կառավարության կողմից մատնանշված այցելությունների նվազագույն քանակը կազմում է 6 (ավել քանակով այցելությունները չեն

սահմանափակվում և նույնպես ծածկված են կառավարության ֆինանսավորմամբ): Այսպիսով, նշված տարբերությունը նվազեցնելու կամ վերացնելու համար անհրաժեշտ են քաղաքականության միջամտության ճշգրտումներ՝ առնվազն միջինում 3 այցելությունով մեծացնելով գյուղական վայրերի վիճակագրությունը:

Համառոտ, ստորը ներկայացվում է յուրաքանչյուր քաղաքականության տարբերակի գնահատված արդյունքները.

Քաղաքականության տարբերակներ	Միջին			Սահմանային		
	Ծածկույթ/այցելություն	Ծրագրի ընդհանուր արժեքը գյուղական վայրերում, հազ. դրամ	Ծրագրի Ծ/Ա գործակից, հազ. դրամ	Ծածկույթի տարբերություն	Միջամտության զուտ արժեքը, հազ. դրամ	Տարբերակի Ծ/Ա գործակից, հազ. դրամ
Տարբերակ 1: Ստատուս քվոի դեպքում կատարվող փոփոխություններ	75,000	151,699	2.02	0	(30,340)	n/a
Տարբերակ 2: Տրասպորտային ծախսերի փոխհատուցում	120,000	302,039	2.52	45,000	120,000	2.67
Տարբերակ 3: Տնային այցելություններ	120,000	266,718	2.22	45,000	84,680	1.88
Տարբերակ 4: Բարձրորակ շարժական ծառայություններ տանը	120,000	350,718	2.92	45,000	168,680	3.75

Արդյունքների նախնական քննարկում

Վերը բերված հաշվարկները ցույց են տալիս, որ 3-րդ տարբերակն ունի ամենացածր ԾԱ գործակիցը, ինչն արտացոլում է այցելող բժշկի համակարգի առավելություններն ավելի թանկ՝ շարժական բարձրորակ ծառայությունների և տրասպորտային ծախսերի փոխհատուցման տարբերակների համեմատ: Վերջինս ունի մեկ այլ թերություն, այն է՝ այդ տարբերակում հղի կանանց մասնակցության ցածր մակարդակի մեծ ռիսկը, քանի որ ֆինանսական խնդիրները կարող են ամենազգալի խոչընդոտը չլինել գյուղական շրջանների

հղի կանանց համար՝ շրջանային առողջապահական կենտրոններ այցելելու գործում: Պատճառները կարող են սփռված լինել ենթակառուցվածքների պակասից մինչև մշակութային: 4-րդ տարբերակն ապահովում է ամենալավ որակական արդյունքը (համաձայն էսպերտային գնահատականի, որը, սակայն, թվայնացված չէ այս հաշվետվությունում), սակայն այն առաջին հերթին պահանջում է զգալի կապիտալ ներդրումներ: Ընդհանուր առմամբ, 4-րդ տարբերակը կարելի է դիտարկել որպես 3-րդ տարբերակի հնարավոր փոխարինող երկարաժամկետ հեռանկարում: Այսպիսով, քաղաքականության տարբերակներին նման փուլային մոտեցումը կարող է դառնալ այս ծրագրի ամենաօպտիմալ միջամտության մոդելը:

Հետաքրքրական է, որ Ծ/Ա գործակիցի և միջին և սահմանային (ծրագրի ընդհանուր ծախս/ծրագրի ընդհանուր արդյունք և ծրագրի լրացուցիչ ծախս/ծրագրի լրացուցիչ արդյունք) արժեքները նույնպես խոսում են 3-րդ տարբերակի օգտին, որը տալիս է ցանկալի արդյունքը նվազագույն միավոր ծախսերով:

Առավել օպտիմալ քաղաքականության տարբերակի ընտրության մեկ այլ մոդել կարող է ներառել բոլոր 3 կամ նույնիսկ 4⁹ տարբերակների փորձարկում այնպես, որ յուրաքանչյուր տարբերակ փորձարկվի առանձին համայնքում կամ նույնիսկ շրջանում, ինչից հետո գրանցված հաջողությունների մասին տեղեկատվությունը հավաքվի և վերլուծվի՝ մինչև վերը նշված տարբերակներից ցանկացածի ամբողջական մասշտաբով ներդրումը:

⁹ "Ստատուս քվո" տարբերակի փորձարկումը կարող է արձանագրել նաև որոշ չալանավորված ոչ ֆինանսական դրական արդյունքներ, քանի որ հիվանդանոցներն այնուհետև ավելի ակտիվ կլինեն՝ իրենց ծառայությունները հղի կանանց առաջարկելու գործում (այդ թվում՝ կիրառելով հեռախոսազանգեր, հիշեցումներ և այլն):

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Ամփոփ ներածական տեղեկատվություն ծրագրերի վերաբերյալ

ԾԱՎ շրջանակները սահմանափակվել են խմելու ջրի ոլորտի ծառայությունների ծրագրերով, որոնք Հայաստանում զգալիորեն սուբսիդավորում են ստանում սկսած 1990-ական թթ.: Դրա համար կա երկու պատճառ. առաջինը՝ անվտանգ խմելու ջրի հասանելիության ապահովումը Հազարակյակի Զարգացման Նպատակների կարևոր թիրախ է և այս ծառայությունների ծածկույթն ամենամեծն է ընդհանուր ջրային ոլորտում (խմելու ջրի մատակարարում, կոյուղի և ոռոգում)¹⁰: Կառավարության միջամտություններն այս ենթա-ոլորտում՝ ուղղակի սուբսիդիաների և ենթակառուցվածքների վերանորոգման ու զարգացման նպատակով դոնորային ֆինանսավորման ներգրավման տեսքով, զգալի են եղել սկսած 2000-ական թթ. սկզբից:

Ուսումնասիրության համար օգտագործված տվյալները վերցված են հիմնականում հանրային աղբյուրներից. ջրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների կողմից Հանրային Ծառայությունների Կարգավորման Հանձնաժողովին ներկայացված հաշվետվություններից, ինչպես նաև ՀՀ Կառավարության տարեկան բյուջետային հաշվետվություններից: Տնային տնտեսությունների վրա քաղաքականության տարբերակների/ծրագրերի ենթադրվող ազդեցությունը գնահատելու համար օգտագործվել են Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ կազմակերպության կողմից 2009թ. իրականացված հետազոտության արդյունքները:

Ինչպես նկարագրված է ՕԲՎ հաշվետվությունում, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծախսերը (ֆինանսավորված տեղական և դոնորային աղբյուրներից) հիմնականում ուղղվել են ջրամատակարարման ենթա-ոլորտ՝ մեծ մասամբ շրջանցելով ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը: Այդ իսկ պատճառով, “ջրամատակարարում և ջրահեռացում” վերնագրված ծրագրերը մեր կողմից դիտարկվել են որպես ջրամատակարարման ծրագրեր, եթե ծրագրի նկարագրության մեջ հատուկ նշված չէր, թե որ ծախսերը և աշխատանքներն իրականացվելու են ջրահեռացման և/կամ կեղտաջրերի մաքրման ոլորտներում (օրինակ՝ ՎԶԵԲ Սևանա լճի բնապահպանական ծրագիրը):

Համաձայն Ասիական Զարգացման Բանկի Գնահատման 2007թ. իրականացված (Առաջարկվող վարկ – Հայաստանի Հանրապետություն. Ջրամատակարարման և

¹⁰ Հայաստանի բնակչության 91.4% ներառված են խմելու ջրի մատակարարման ծրագրում, 74.4% ներառված են կոյուղու և 25%՝ ոռոգման ծառայություններում: (ՕԲՎ հաշվետվություն, ԱՍՏ, 2009թ.)

ջրահեռացման ոլորտի ծրագիր) ուսումնասիրության, ոլորտի 2006թ. արդյունքների ցուցանիշները ցույց են տալիս հետևյալը.

- Բնակչության մոտ 88% միացված է խմելու ջրի մատակարարման կենտրոնացված համակարգին, որից 75%-ը միացված է տան ներսում ծորակներով իրականացվող ջրամատակարարմանը: Վերջիններիս մոտ 15% ստանում է 24-ժամյա ծառայություն, իսկ մնացած մասը՝ գրաֆիկով ջրամատակարարում, որի տևողությունը տատանվում է 2-ից մինչև 8 ժամ միջակայքում: Մնացած 12%-ի համար՝ համաձայն ԱԶԲ փաստաթղթի, անվտանգ խմելու ջուրը հասանելի չէ և նրանք մնում են ոչ անվտանգ ջրի աղբյուրների հույսին: Գյուղական շրջաններում տնային տնտեսությունների մոտ 51% ունեն ծորակներ տան ներսում, իսկ մնացածն օգտվում են համատեղ օգտագործման, դրսում տեղադրված բակային ծորակներից կամ հանրային աղբյուրներից: Խմելու ջուրը հիմնականում (96%) ստացվում է ստորգետնյա աղբյուրներից՝ խորքային հորերի, ջրհորների և աղբյուրների միջոցով: Ստորգետնյա ռեսուրսներն ընդհանուր առմամբ բարձրորակ են:
- Քաղաքային տարածքներում տնային տնտեսությունների մոտ 60%¹¹-ին հասանելի են ջրահեռացման ծառայությունները, սակայն համակարգերը լրջորեն մաշված են: Գյուղական շրջաններում համայնքներն իրենք են ապահովում ջրահեռացումը, որի որակը համապատասխան չէ:
- Զրամատակարար ընկերությունների գործառական արդյունավետությունը¹² տատանվում է 25%-ից մինչև 40%՝ պահանջելով կառավարության մեծաքանակ սուբսիդիաներ: Կորուստները¹³ տատանվում են 40%-ից 90% (միջինը 80%-ից բարձր է) և հասույթի հավաքագրման արդյունավետությունը¹⁴ տատանվում է 50%-ից 75%¹⁵-ի սահմաններում: Գործառական ցածր արդյունավետության հիմնական պատճառներն են ցածր եկամուտը, շահագործման բարձր ծախսերը և բարձր կորուստները:
- Եկամուտների ցածր մակարդակի հիմնական պատճառներն են կառավարման և ծառայությունների ցածր որակը, հաշիվների ներկայացման և հավաքագրման անարդյունավետությունը, չվճարողների դեմ պայքարելու՝ ծառայություններ մատուցողներին տրված աչ համարժեք իրավական լիազորությունները և գոյություն ունեցող սակագների վատ կառուցվածքը, որը չունի ապագա սակագների պլանավորման համակարգ:
- Բարձր ծախսերի պատճառներն են ավելորդ հզորություններ ունեցող, հնամաշ և վթարային ենթակառուցվածքները, հին և անարդյունավետ պոմպերը, էլեկտրաէներգիայի թանկացող բարձր գինը և համակարգերի պահպանման միջոցառումների պակասը:

¹¹ Համաձայն ԱՍՏ կազմակերպության հետազոտության՝ Հայաստանի տնային տնտեսությունների 74.4% միացած են կոյուղու համակարգերին:

¹² Գործառական արդյունավետությունը ջրի վաճառքից ստացվող եկամտի և շահագործման ծախսերի հարաբերակցությունն է:

¹³ Չհաշվառված ջրաքանակ կամ կորուստներ. արտադրված և վաճառված ջրի միջև տարբերությունը՝ արտահայտված որպես ընդհանուր արտադրված ջրաքանակի մաս:

¹⁴ Ստացված եկամուտը՝ արտահայտված հաշիվներով ներկայացված գումարի տոկոսով:

¹⁵ Համաձայն ընկերությունների կողմից ՀԾԿ-ին ներկայացված հաշվետվությունների, 2009թ. հավաքագրման տոկոսները 90%-ից բարձր են:

- Կորուստների բարձր մակարդակը պայմանավորված է համակարգում առկա արտահոսքերով, ապօրինի միացումներով, շրջանցված և ոչ ճշգրիտ ջրաչափերով և ծառայությունների դիմաց չվճարող բաժանորդներով:

Ինչևէ, ԱԶԲ ուսումնասիրության ժամանակահատվածից հետո՝ մինչև 2009թ, տեղի են ունեցել վերը նշված ցուցանիշների որոշակի բարելավումներ: Մասնավորապես, համաձայն ԱՍՏ-ի կողմից 2009թ. իրականացված հոտազոտության, ընդհանուր բնակչության 91.4% օգտվում է ջրամատակարարման ծառայություններից: Զուգահեռաբար, ջրամատակարարման շարունակականությունը Երևանում հասել է օրեկան 20.4 ժամի՝ ծածկելով երկրի բնակչության մոտ մեկ երրորդը:

Ոլորտի համար կառավարության հիմնական ծրագրերը ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. Կառավարության գործունեության 2008թ. ծրագիր, 2009-2011թ.. Միջնաժամկետ Ծախսային Ծրագիր (ՄԺԾԾ), Կայուն զարգացման Ծրագիր 2008թ. (վերանայված 2003թ. ԱՀՌԾ), կառավարության որոշումներ և այլ ոլորտային փաստաթղթեր:

Համաձայն 2009-2011 ՄԺԾԾ-ի, ՀՀ Կառավարության (ՀՀԿ) հիմնական նպատակները ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում հետևյալն են.

- Ջրային համակարգերում ներդրումային քաղաքականության մշակում և ներդրում, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձագիտական գնահատումների իրականացում;
- Մասնավոր կառավարման և մասնավոր օպերատորների համակարգի, ինչպես նաև ՀՀ Ջրային օրենսգրքի դրույթներին համապատասխանող կառավարման համակցված և համադրված տեսակների ներդրում;
- Ջրամատակարար ընկերություններում կառավարման համակարգի բարելավում; նրանց ֆինանսական կենսունակության բարելավում՝ գործառական և պահպանման ծախսերի, ջրակորուստների մակարդակի կրճատման և գանձումների բարելավման միջոցով:

Ոլորտի գերակայությունները հետևյալն են.

1. Ջրամատակարարման ծառայությունների ջրի որակի լավացում, ջրամատակարարման կայունության ապահովում, ջրակորուստների կրճատում, ինչպես նաև աստիճանական անցում շուրջօրյա ջրամատակարարման:
2. Ջրային համակարգերի կապիտալ վերանորոգում և դրանց տեխնիկական վերազինում, ինչպես նաև բաշխիչ ցանցերի վերանորոգում:
3. Ջրամատակարար ընկերությունների ֆինանսական կենսունակության բարելավում՝ կառավարման համակարգի բարելավման և մասնավոր հատվածի հետ հետագա համագործակցության միջոցով:

Համաձայն ՀՀ Կառավարության գործունեության (ՀՀԿ) 2008թ. ծրագրի.

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում կառավարությունը կենտրոնանալու է մատակարարվող ջրի որակի բարելավման, կայուն ջրամատակարարման, ջրակորուստների կրճատման և դեպի 24-ժամյա ջրամատակարարում աստիճանական անցման աշխատանքների ուղղությամբ: Պետական ներդրումները հիմնականում նախատեսվում է ֆինանսավորել արտոնյալ վարկերի և դրամաշնորհների հաշվին՝ երկկողմանի և բազմակողմանի դոնորային օժանդակությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում համակարգում նոր գործարկված հզորությունների պատշաճ պահպանմանը և շահագործմանը, ինչի նպատակով ծրագրվելու են ուղղակի հատկացումներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից: Խմելու ջրի և ոռոգման ավելի երկարաժամկետ բարեփոխումների ծրագիրն ուղղված կլինի այս համակարգերի հուսալիության և արդյունավետության բարձրացմանը և ոռոգման համակարգին պետական թիրախավորված աաջակցությանը, ջրակորուստների կրճատմանը և ջրահեռացման համակարգերի որակի բարձրացմանը: Ոլորտի կառավարման բարեփոխումների խորացող գործընթացը կառավարության կողմից կիրականացվի համակարգերի կառավարման ապակենտրոնացման շարունակական և ընդլայնված գործընթացի միջոցով: Կառավարության ներդրումների առաջնահերթությունների շրջանակներում ծրագրված է.

1. Կատարել պետական ներդրումներ՝ հիմնականում երկկողմանի և բազմակողմանի դոնորային աջակցության շրջանակներում երկրին տրամադրված արտոնյալ վարկերի միջոցներով,
2. Լուծել գոյություն ունեցող և ստեղծվելիք կառույցների պատշաճ շահագործման և պահպանման խնդիրները,
3. Ապահովել հիդրո-տեխնիկական կառույցների պատշաճ պահպանումը, վերանորոգումը և հզորացումը՝ ապահովելով դրանց անվտանգ և անընդհատ շահագործումը,
4. Կառավարությունը նպատակ ունի ընդունել գյուղական շրջաններում ջրամատակարարման ներդրումային ծրագիր և պետական ներդրումներն առաջնային կերպով կօգտագործվեն ծրագրում սահմանված խնդիրների լուծման համար:

ՀՀԿ երկարաժամկետ նպատակները տվյալ պահին ավելի մանրամասնորեն սահմանված չեն, սակայն համահունչ են 2006թ. Ջրի Ազգային Ծրագրի մասին օրենքի ընդհանուր նպատակների հետ:

Հազարամյակի Ջարգացման Նպատակներին համապատասխան, ՀՀԿ մինչև 2020թ. նպատակ ունի հասնել տնային տնտեսություններին 24-ժամյա հասանելի ջրամատակարարման ողջ երկրում, անվտանգ խմելու ջրի մատակարարման 100% ծածկույթի (2007թ. 88%-ի և 2009թ. 91.4%-ի համեմատ) և ջրահեռացման ծառայությունների

90% ծածկույթի (2007թ. 60%-ի և 2009թ. 74.4%-ի համեմատ) (ԱԶԲ, 2008թ., ԱՍՏ հետազոտություն, 2009թ.):

Ինչպես կարելի է տեսնել, Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրները բազմաթիվ են. բացի ծառայությունների ներկա արժեքի ամբողջական փոխհատուցում չապահովող սակագներից՝ պահանջվող ներդրումների չափն ահռելի է: Սակայն, իրատեսական չէ մոտակա 10-20 տարիների համար գնահատել ներդրումների ընդհանուր ծավալը, որոնք անհրաժեշտ կլինեն կառավարության տարբեր փաստաթղթերում սահմանված ցանկալի արդյունքներին հասնելու համար: Ավելին, ենթա-ոլորտների մասով հստակ առաջնահերթություններ սահմանված չեն (ջրամատակարարում՝ համեմատ ջրահեռացման, քաղաքային ենթակառուցվածքներ՝ համեմատ գյուղականի): Վերջիվերջո, Նշված ներդրումներն անհրաժեշտ կլինի «վերադարձնել» սակագների միջոցով, քանի որ մինչ այժմ կատարված մեծածավալ ներդրումները ֆինանսավորվել են դոնորային արտոնյալ միջոցներով: Ի հավելումն ուսումնասիրության հիմնական հարցին, մեկ այլ կարևոր հարց է, թե ի՞նչ կանի կամ ի՞նչ պետք է անի ոլորտը՝ նման ֆինանսավորման բացակայության պայմաններում: Որտեղի՞ց պետք է ներգրավվեն սահմանափակ միջոցները և ինչպե՞ս պետք է դրանք ծախսվեն:

Ծախսերի մասին տվյալների նկարագրություն

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում կառավարության ներկայիս միջամտությունները ուղղակիորեն բխում են ընդունված քաղաքականություններից և դրանց վրա զգալի ազդեցություն ունի նաև ՄՖՀ կողմից այս ոլորտին տրամադրվող կոնցեսիոնալ վարկերի հասանելությունը:

Այսպիսով, նշված ոլորտին միջամտությունները մինչ այժմ կատարվել են հետևյալ եղանակներով. (i) սուբսիդիաներ կառավարության սեփականություն (մասնակի կամ ամբողջությամբ) հանդիսացող ջրային ընկերություններին՝ գործառական ճեղքվածքները փակելու նպատակով, (ii) ուղղակի ներդրումներ նշված ընկերություններում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքները վերանորոգելու և բարելավելու նպատակով, ինչպես նաև նույն նպատակով արտոնյալ վարկային միջոցների տրամադրում: Ուշադրության է արժանի այն փաստը, որ ներկայումս ջրամատակարար բոլոր 5 ընկերությունները կառավարվում են մասնավոր օպերատորների կողմից կամ նրանց են տրված վարձակալությամբ՝ մասնավոր հատվածի մասնակցության միջոցառումների շրջանակներում: Միջամտության վերջին ձևը ֆինանսավորվել է ՄՖՀ-ների վարկերով, որոնք ի սկզբանե կապված են ենթակառուցվածքների վերանորոգման/արդիականացման ծրագրին: Այսպիսով, միջամտությունների երկու հիմնական ուղղությունները կարելի է ամփոփել որպես սուբսիդիաներ՝ գործառնական ճեղքվածքների համար (որոնք ներառում

են ցածր սակագների և թերի հավաքագրման ազդեցությունները) և կապիտալ ծախսերի ֆինանսավորում:

Սակայն, **ՀՀ Ջրային օրենսգրքում ամրագրված քաղաքականությունը ենթադրում է աստիճանական անցում դեպի ծախսաձածկող սակագներ՝** բնակչության եկամուտների բարձրացման և ջրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների (ՋնՋԸ) գործունեության արդյունքների բարելավմանը զուգահեռ: Այս նպատակով, վերջին 10 տարիների ընթացքում սակագներն աստիճանաբար բարձրացվել են՝ մատակարարված ջրի մեկ խորանարդ մետրի (ԽՄ) դիմաց նախկին 46 ՀՀ դրամից մինչև ներկայիս մոտ 180 դրամը: Սակագների բարձրացմանը զուգահեռ աճել են նաև բաժանորդներից հավաքագրվող եկամուտները, իսկ սուբսիդիաների չափը մինչև 2009¹⁶թ. նվազել է:

Աղյուսակ 9: Ջրային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշները 2005-2009թթ.

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Մատակարարված ջուր, մլն. ԽՄ	114.9	96.3	91.7	98.6	92.0
Հասույթ, մլն. ՀՀ դրամ	12691.1	12792.5	13571.1	14179.8	14,723.1
Վճարումներ, մլն. ՀՀ դրամ	8993.8	10295	11719.4	12588.1	13,834.6
Վճարների հավաքագրման գործակիցներ, %	71%	80%	86%	89%	94%
ՋնՋԸ-ներին տրվող ընթացիկ սուբսիդիաներ, մլն. ՀՀ դրամ	2,568.8	1,633.6	1,381.3	1,287.0	901.8
Ընդամենը ընթացիկ ծախսեր, մլն. ՀՀ դրամ	11,562.6	11,928.6	13,100.7	13,875.1	14,736.4

Համաձայն Կայուն Ջարգացման Ծրագրի (ԿԶԾ, Վերանայված ԱՀՌԾ, 2008թ., էջեր 357 - 359), ջրամատակարարման սակագները ծախսաձածկման մակարդակից ցածր պահելը շարունակելու հիմնական պատճառը մատչելիության հետ կապված մտահոգություններն են, որը դեռևս էական են ցածր եկամուտներով քվինտիլների համար: Սակայն, ամենացածր եկամտային քվինտիլի տնային տնտեսությունների համար 2006թ. դրությամբ կատարված “մատչելիության” գնահատականները՝ համաձայն ԿԶԾ-ի, համարյա հավասար էին 2006թ. միջին սակագներին: Սակագների “մատչելի” մակարդակի համար ԿԶԾ-ի այս գնահատականներից և կանխատեսումներից երևում է, որ ջրամատակարարման ու ջրահեռացման վճարները միջնաժամկետ հեռանկարում կարող են զգալիորեն ավելանալ՝ առանց ցածր եկամուտներով քվինտիլների համար մատչելիության զգալի խնդիրներ առաջացնելու (ԿԶԾ, էջ 359):

¹⁶ Այստեղ արժե նշել, որ 2006թ. Երևանի համար սուբսիդավորումը դադարեցվեց մինչև 2010թ.: Կարգավորող անփոփոխ թողեց Երևան Ջուր ընկերության սակագինը սկսած 2010թ. հունիսից և այդ իսկ պատճառով Երևանի քաղաքապետարանը մտադիր է ուղղակիորեն փոխհատուցել տարբերությունը մասնավոր օպերատորին (վարձակալին): Այսպիսով, սուբսիդիաների ընդհանուր ծավալը կաճի 2010թ. և ենթադրաբար նաև 2011թ.:

Այնուամենայնիվ, եզրակացությունն այն է, որ միջնաժամկետ հեռանկարում սակագները չեն սահմանվի այնպիսի մակարդակում, որ փոխհատուցեն ոչ միայն ընթացիկ, այլ նաև կապիտալ ծախսերը և այդպիսով, այս ոլորտը կպահպանի առաջնահերթությունը՝ ԿԶԾ իրականացման ամբողջ ժամանակաշրջանի (մինչև 2021թ.) համար ներդրումների ֆինանսավորման տեսանկյունից՝ շեշտը հատուկ դնելով միջնաժամկետ հեռանկարում արտոնյալ ֆինանսավորման աղբյուրների վրա: ԿԶԾ-ի գնահատականներով, այս ոլորտում պետական ներդրումները կհասնեն ՀՆԱ-ի 0.3% և 2018թ. սկսած կպահպանվեն այդ մակարդակում: Ծառայությունների տեսանկյունից հիմնական նպատակն է 2006թ.-ի՝ օրական 12-ժամյա մատակարարումից մինչև 2018թ. հասնել օրական 22-ժամյա ջրամատակարարման (միջինում ամբողջ երկրի համար):

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են կառավարության կողմից ֆինանսավորված կապիտալ ծախսերը. ինչպես տեսնում ենք, կապիտալ ծախսերի զգալի մասը ֆինանսավորվել է դոնորներից և ՄՖՀ-ներից ստացված վարկերի և դրամաշնորհների հաշվին:

Աղյուսակ 10: Պետական բյուջեից ջրային ոլորտ ուղղվող կապիտալ ծախսերի դինամիկան

	2005	2006	2007	2008	2009	Average 2005- 2009
Ընդհանուր կապիտալ ծախսեր, մլն. ՀՀ դրամ, այդ թվում.	7,297.8	4,075.9	4,722.9	5,354.6	10,851.2	6,460.5
ՄՖՀ-ի կողմից ֆինանսավորվող	7,297.8	3,977.9	4,614.6	5,295.2	10,468.8	6,330.8

Միջին հաշվով, 2005-2009թթ. կապիտալ ներդրումների համար ծախսվել է տարեկան 6.5 մլրդ. ՀՀ դրամ, որի միայն մի փոքր մասն է ֆինանսավորվել տեղական աղբյուրներից:

Ծախսերի հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն և արդյունավետության մասին տվյալների նկարագրություն

Կարելի է եզրակացնել, որ ներկայումս կառավարությունը գլխավոր նպատակը խմելու ջրի մատակարարման ծածկույթի ընդլայնումը չէ, քանի որ, ինչպես վերը նշված է, խմելու ջրի մատակարարումը հասանելի է Հայաստանի տնային տնտեսությունների ավելի քան 90%-ին:

Այդ պատճառով, ոլորտում առկա առաջնահերթությունները նպատակ ունեն բարելավել ջրամատակարարման ծառայությունը (ավելացնել շարունակականությունը) և կրճատել ջրակորուստները՝ մաշված համակարգերի և ցանցերի արդիականացման և վերանորոգման միջոցով: Սա նաև արտացոլված է տվյալ ոլորտում կառավարության ներկայիս միջամտություններում: Այս իմաստով, մեր ծրագրային տարբերակները մշակված են ներկա քաղաքականության ծախսերի հետ համեմատության նպատակով:

Հիմնվելով կառավարության ընդհանուր երկարաժամկետ նպատակների և սակագների ու սուբսիդիաների ներկա վիճակի վրա, մենք ԾԱՎ համար մշակել ենք հետևյալ տարբերակները.

- Տարբերակ 1 (Ստատուս քվո). Անորոշ ժամանակով շարունակել ներկայիս սուբսիդիաների և ներդրումների ֆինանսավորման պրակտիկան:
- Տարբերակ 2. Բարձրացնել սակագները մինչև այն մակարդակը, որն ապահովում է գործառական ծախսերի փոխհատուցում՝ միաժամանակ սակագների ավելացած մասի դիմաց փոխհատուցում տրամադրելով աղքատ տնային տնտեսություններին (կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել կառավարության կողմից՝ որպես ջրամատակարար ընկերությունների սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ ներդրումներ):
- Տարբերակ 3. Բարձրացնել սակագները՝ ծախսերի ամբողջական փոխհատուցումն ապահովելու նպատակով (ներառյալ կապիտալ ծախսերը)՝ զուգահեռաբար աղքատ տնային տնտեսություններին փոխհատուցելով բարձրացումն այնպես, որ սակագնի բարձրացման ազդեցությունն այդ տնային տնտեսությունների վրա լինի զրոյական:

Ակնհայտ է, որ Տարբերակ 3-ը չի դիտարկվում որպես կիրառական խորհուրդ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում, սակայն կարող է արժանի լինել քննարկման, որպեսզի գնահատվի տնային տնտեսությունների և կառավարության բյուջեի վրա պոտենցիալ ազդեցության չափն այն դեպքում, եթե սակագներն աստիճանաբար բարձրացվեն՝ ծառայությունների մատուցման արժեքը ամբողջությամբ փոխհատուցելու նպատակով: Պարզ է նաև, որ արտոնյալ դոնորային միջոցներով կապիտալ ֆինանսավորումն շատ ավելի նախընտրելի տարբերակ է ի համեմատ սակագների բարձրացմանը՝ քանի դեռ նման միջոցները հասանելի են: Սակայն երկարաժամկետ հեռանկարում երկկողմանի և բազմակողմանի դոնորները կարող են իրենց միջոցներն ուղղել դեպի այլ ոլորտներ (կամ դադարեցնել Հայաստանին արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը), ինչից հետո կմնա երկու հնարավոր տարբերակ. բոլոր կապիտալ ծախսերի ֆինանսավորում կառավարության կողմից՝ ընդհանուր հարկերից, կամ բեռի ամբողջական կամ մասնակի փոխանցում սպառողներին՝ սակագների միջոցով: Ակնհայտորեն, կարող է լինել նաև մեկ այլ տարբերակ, որն իրենից ներկայացնում է նախորդ երկուսի միջանկյալ համադրությունը. սակագների աստիճանական կամ մասնակի

ավելացում՝ ներառելով կապիտալ ծախսերի մի մասը, սակայն դրանց մնացած մասը շարունակելով ֆինանսավորել կառավարության կողմից: Այսպիսով, խելամիտ է գնահատել սակագների վրա պոտենցիալ ազդեցությունը և հետո քննարկել քաղաքականության տարբերակները:

Մոտավոր տարբերակները մշակվել են հիմնվելով հետևյալի վրա.

- ներկայիս միջին սպառման կառուցվածքը,
- փաստացի վճարներ – միջոցների ստացում բաժանորդներից և կառավարությունից (համեմատած վաճառքներին, որոնք հաշվարկվում են սահմանված սակագների հիման վրա),
- վերջին մի քանի տարում կատարված կապիտալ ծախսեր (համեմատած ակտիվների մաշվածության հետ, որը լավագույն տարբերակով պետք է սակագնի մաս կազմի),
- Տնային տնտեսությունների միջին թիվը, որոնք կանոնավոր կերով ստացել են ընտանեկան նպաստներ 2007-2009թթ. ընթացքում (117,779 տնային տնտեսություններ):

Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ վերջին 5-7 տարիների ընթացքում ընկերություններում իրականացվել են զգալի բարեփոխումներ և փոփոխություններ, սահմանվել է “մոդելային տարի”, որն արտացոլում է ոլորտում առկա ամենաթարմ իրավիճակը, մասնավորապես.

- Բաժանորդներին ջրի ծավալային մատակարարումը. վերցվել է միջինը 2007-2009թթ. համար: Սրա նպատակն էր 2003թ. սկսված՝ սպառման կետում բարելավված հաշվառման ազդեցությունից խուսափելը: 2009թ. տարեվերջի դրությամբ, ջրաչափ ունեցող բաժանորդների մասնաբաժինն ընդհանուրի մեջ անցել է 80%, մինչդեռ 2006թ. վերջի դրությամբ ջրաչափ ունեին բաժանորդների 70%-ից պակասը: Մնացածին հաշիվներ էին ներկայացվում համաձայն նորմատիվի¹⁷: Այդպիսով, ավելի խելամիտ է էքստրապոլացնել 2007-2009թթ. միջին սպառման տվյալները: Իդեալական դեպքում, Տարբերակներ 2-ի և 3-ի համար անհրաժեշտ է հաշվի առնել բարձրացված սակագների հնարավոր ազդեցությունը սպառման կառուցվածքի վրա: Սակայն, քանի որ ոլորտին վերաբերվող տվյալների վրա դեռևս մեծ է ջրաչափերի ներդրման ազդեցությունը, շատ բարդ է գնահատել լրացուցիչ թանկացումների ազդեցությունը սպառողների վարքի վրա: Այնուամենայնիվ, սպառման հնարավոր ծավալները չգերազանահատելու նպատակով, մեր կանխատեսումներում օգտագործել ենք մեկ շնչի հաշվով միջին սպառման ավելի ցածր արժեք, այն է՝ 80լ/օր:

¹⁷ Նորմատիվը սահմանվել էր մեկ շնչի հաշվով օրական 250 լիտր (լ/օր)՝ ջրաչափ չունեցող միացումների համար Երևանում և 150 լ/օր՝ բոլոր այլ վայրերում: Իրական կյանքում ջրի մեկ շնչին ընկնող փաստացի չափված միջին սպառումը կազմում է 80-90 լ/օր: Սա հանգեցնում է մի ենթադրության, որ սակագների բարձրացումը բաժանորդների համար ջրաչափեր տեղադրելու շարժառիթ կհանդիսանա՝ գերավճարներից խուսափելու նպատակով: Աղքատ տնային տնտեսությունների վրա ջրաչափերի տեղադրման ծախսի ազդեցությունը կարելի է անտեսել երկու պատճառով. այն շատ ցածր է (25 ԱՄՆ դոլարից պակաս) և սուբսիդավորվում է կառավարության կողմից ՏՏ համար՝ Ընտանեկան Նպաստների Ծրագրով:

- Տարեկան կապիտալ ծախսերի ծավալներ. վերցվել է վերջին 5 տարիների միջինը, որպեսզի չեզոքացվեն տարեկան տատանումների ազդեցությունները, որոնք սովորաբար պայմանավորված են մեկնարկում ծրագրի իրականացման ցածր արագությամբ և ծրագրի ավարտին մոտ գրանցվող շատ ավելի բարձր տեմպով:
- Սակագներ. վերջին 3 տարիների համար հավաքագրման մակարդակը կազմել է ներկայացված հաշիվների շուրջ 90%, որը ենթադրում է, որ տնային տնտեսությունների փաստացի “բեռը” ավելի ցածր է, քան այն կլիներ, եթե հաշվարկվեր կարգավորողի կողմից սահմանված սակագներով: Մյուս կողմից, սա հենց այն պատճառն է, որով կառավարությունը սուբսիդավորում է այս ընկերություններին: Այսպիսով, տնային տնտեսությունների համար փաստացի միջին “գործող” սակագինը կլինի. ընդհանուր վճարված գումարը բաժանած հաշվառված ր հաշիվներով ներկայացված ջրի ծավալների վրա: (Ենթադրվել է, որ Կարգավորողի կողմից սահմանված սակագները 2009թ. համեմատ կմնան անփոփոխ):
- Ստատուս քվո տարբերակում սուբսիդիաների գումարը. (i) Որպես հիմք է ընդունվել վերջին 3 տարիների միջինը: Ի լրումն, ներառվել է Երևանի քաղաքապետարանի կողմից հնչեցված սուբսիդիաների համարժեք գումար (բաժանորդների մատակարարված տարեկան ջրաքանակը՝ բազմապատկած պահանջված և հաստատված սակագների միջև առկա տարբերությունով՝ 14 դրամ մեկ ԽՄ դիմաց); (ii) Օգտագործվել է վերջին 5 տարիների համար կառավարության կողմից ոլորտում ֆինանսավորված կապիտալ ծախսերի միջին մեծությունը:

Տարբերակները կարելի է համեմատել հիմնվելով կառավարության բյուջեի վրա դրանց ընդհանուր ազդեցության (արժեքի) վրա, քանի որ ենթադրվում է, որ աստիճանաբար (և վերջ ի վերջո) սպառողները ստիպված են լինելու վճարել իրենց կողմից սպառվող ծառայությունների ամբողջ արժեքը: Սակայն, համեմատությունը կարող է իրականացվել նաև հարաբերակցությունների միջոցով. սուբսիդիաների ծախսը մեկ շահառուի հաշվով (տնային տնտեսության կամ առանձին անհատ շահառուի մակարդակով): Ինչևէ, ջրի սպառումն ավելի շատ որոշվում է տնային տնտեսության մակարդակով, քան՝ անհատների, քանի որ տնային տնտեսություններում շատ աշխատանքներ կատարվում են “կենտրոնացված” մակարդակով: Այդ պատճառով մենք նախընտրեցինք բոլոր հաշվարկներն իրականացնել տնային տնտեսության մակարդակով:

Ընդունելով, որ սուբսիդավորման ծրագիրն իր էությամբ դեպի աղքատներն ուղղված քաղաքականություն է և ձգտում է երկրի բնակչության ամենաաղքատ շերտերին ապահովել որոշակի ծառայությունների կամ ապրանքների բարելավված հասանելիություն և մատչելիություն, կարելի է վերցնել աղքատների քանակը՝ ԾԱ գործակիցները հաշվարկելու նպատակով: Հայաստանում սոցիալական աջակցության ծրագրերն իրականացվում են հիմնականում Ընտանեկան Նպաստների Ծրագրի միջոցով¹⁸, որի թիրախն են հանդիսանում ամենաաղքատ տնային տնտեսությունները: Համաձայն ՀԲ “Հայաստան.

¹⁸ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով: www.mss.am

2008-09թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամ, քաղաքականության արձագանքներ և տնային տնտեսությունների կողմից հաղթահարման ռազմավարություններ” հաշվետվության (2010թ.), “Ընտանեկան Նպաստների ծրագրի միջոցների մոտ 61% ուղղվել է դեպի ամենացածր քվինտիլը՝ այն դարձնելով տարածաշրջանի լավագույնս թիրախավորված ծրագրերից մեկը: Այսպիսով, ցանկացած սուբսիդավորման կամ աջակցության ծրագրի համար Ընտանեկան Նպաստների ծրագրի շահառուներին որպես թիրախային խումբ ընտրելն ավտոմատ կերպով կապահովի աջակցության թիրախավորում խելամիտ համարժեքությամբ:

Տնային տնտեսությունը իրավունք է ստանում ընդգրկվելու Ընտանեկան Նպաստների ծրագրում, եթե այն բավարարում է որոշակի չափանիշների. տնային տնտեսության ընդհանուր գնահատականի հաշվարկման համար օգտագործվում են տարբեր պարամետրեր, ինչպիսիք են՝ տնային տնտեսության անդամներից յուրաքանչյուրի սոցիալական խումբը, անաշխատունակ անձանց թիվը, տեղադիրքը, կացարանային պայմանները, միջին ամսեկան եկամուտը և այլն: 2007-2009թթ. ընթացքում միջին հաշվով 117 779 տնային տնտեսություններ ստացել են ընտանեկան նպաստներ (Տարեկան Բյուջեի հաշվետվություններ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2007թ., 2008թ., 2009թ.): Այսպիսով, կարելի է այս թիվն ընդունել որպես լավ հիմք՝ աղքատ տնային տնտեսությունների, այսինքն՝ Հայաստանում իրականացվող ցանկացած սուբսիդավորման ծրագրի առաջնային թիրախային շահառուների թվաքանակի համար: ԾԱ գործակիցների մեր հաշվարկում այս թիվն ընդունվել է որպես շահառուների թիվը:

Արդյունավետության չափման կամ գնահատման մեթոդաբանություն

Տարբերակների արդյունավետության գնահատումը հիմնված է ցանկացած ոլորտի տնտեսական սահմանման ֆունդամենտալ սկզբունքի վար, այսինքն՝ ներկա քաղաքականությունն ունի թիրախավորման պակաս և “բոլորի սուբսիդավորումը՝ զուգահեռաբար բոլորից հարկեր հավաքելով և բոլորի համար նույն սակագները կիրառելով” տնտեսապես անիմաստ և անպետք քաղաքականություն է: Այդ իսկ պատճառով, արդյունավետության չափման հիմնաքարն է հանդիսանում շահառուների սահմանումը որպես այն անձինք, որոնք իրոք կարող են լինել սուբսիդիաների ստացողներ, այսինքն՝ նրանք, ովքեր կարիքավոր են: Հայաստանի ենթատեքստում դա բնակչության ամենացածր քվինտիլն է: Այսպիսով, արդյունավետության գնահատման մեթոդաբանությունն է. քաղաքականության տարբերակների իրական արժեքի որոշումն այդ քաղաքականության իրական շահառուի համար (ներառյալ ներկա քաղաքականությունը):

Հաշվարկված տարբերակների արդյունքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 11: Հաշվարկների արդյունքներ (տարբերակների սիմուլյացիաներ)

	Տարբերակ 1 (Ստատուս քվո)	Տարբերակ 2 (Գործառնական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Բոլոր ծախսերի փոխհատուցում)
Սակագնի մակարդակի բարձրացում, %	անփոփոխ	14%	60%
Սուբսիդիաներ ջրային ընկերություններին, մլն. ՀՀ դրամ	1,967.0	0	0
Նպաստներ (փոխհատուցում) աղքատներին, մլն. ՀՀ դրամ		278.5	1,193.4
Կառավարության կողմից ֆինանսավորված կապիտալ ծախսեր, (2005-09թթ. միջինը), մլն. ՀՀ դրամ	6,460	6,460	0
Ընդամենը, ծախսեր բյուջեից, մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,739.0	1,193.4

Տարբերակ 2 ենթադրում է, որ ոչ աղքատ տնային տնտեսությունները կարող են կրել սակագների՝ մինչև գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակը բարձրացման բեռն (14% բարձրացում ներկա մակարդակից) առանց մատչելիության հետ կապված խնդիրների: Սակայն, 1-ին քվինտիլի աղքատ տնային տնտեսությունների վրա սակագների բարձրացման ազդեցությունները չեզոքացնելու նպատակով կառավարությանն անհրաժեշտ կլինի փոխհատուցումներ տրամադրել մոտ 117 հազար տնային տնտեսությունների (մոտ 460 հազար անհատների)՝ 278.5 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Գումարների միջև մոտ 1.7 մլրդ. տարբերությունը (1,967 -278.5 = 1688.5) կվճարվի 2-5 քվինտիլների ոչ աղքատ տնային տնտեսությունների կողմից՝ համարյա հավասարապես¹⁹:

Տարբերակ 3-ում նպատակ է եղել գնահատել այն գումարի մեծությունը, որն անհրաժեշտ կլինի փոխհատուցման տեսքով վճարել աղքատներ, եթե սակագինը սահմանվի ծառայությունների ողջ արժեքը փոխհատուցելու մակարդակի վրա (ներառյալ տարեկան կապիտալ ծախսերի գումարները՝ որպես հիմնական միջոցների մաշվածության փոխհատուցում): Վերջին տարիների տվյալների համաձայն, անհրաժեշտ կլինի սակագները բարձրացնել 60%-ով՝ ոչ միայն ընդհանուր գործառնական ծախսերը, այլ նաև միջին տարեկան կապիտալ ծախսերի մոտ 6.5 մլրդ. ՀՀ դրամ գումարը: Այլ համավասար պայմաններում, նման թանկացումը կհանգեցնի տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերում ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) ծախսերի մասնաբաժնի

¹⁹ Օգուտի բաշխումը խսելու ջրի մատակարարման ոլորտում տատանվում է ֆվինտիլ 2-ի 19.75%-ի և ֆվինտիլ 5-ի 20.85%-ի միջև: Օգուտի Բաշխման Վերլուծություն, Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ, Հայաստան 2010թ.

ավելացմանը նույն չափով: Ստորև տրված աղյուսակում ներկայացվում են տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում ՋևՋ ծառայությունների դիմաց վճարների միջին մասնաբաժիններն ըստ քվինտիլների, ինչպես նաև նույն մասնաբաժիններն այն դեպքում, եթե սակագները բարձրացվեն մինչև ծախսերի ամբողջական փոխհատուցման մակարդակը:

Աղյուսակ 12: ՋևՋ միջին ամսեկան հաշիվները Ստատուս քվի և այլ քննարկված տարբերակների դեպքում

	SS միջին ամսեկան հաշիվները, ՀՀ դրամ	Ստատուս քվիի համեմատ բարձրացումը
Ստատուս քվի	1,407.5	
Տարբերակ 2	1,604.6	197.1
Տարբերակ 3	2,251.9	844.4

2-5 Քվինտիլների համար մասնաբաժինն ընդհանուր ծախսերում կապահպանվի 2.5%-ից ցածր մակարդակում: Այսպիսով, սակագների նման բարձրացումը չպետք է լուրջ խնդիրներ ստեղծի ոչ աղքատ տնային տնտեսությունների համար: Ինչ վերաբերվում է Քվինտիլ 1-ի տնային տնտեսություններին, ապա նոր սակագների բեռը կարող է բավականին զգալի լինել:

Աղյուսակ 132: Տնային տնտեսությունների ներկա և հնարավոր ծախսերը (մասնաբաժինը SS բյուջեներում)

	ՋևՋ վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ծախսերում, 2009թ. ²⁰	ՋևՋ վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ծախսերում, սակագների 60%-ով բարձրացման դեպքում
Ք1	2.16%	3.45%
Ք2	1.50%	2.40%
Ք3	1.34%	2.14%
Ք4	1.21%	1.94%
Ք5	0.76%	1.21%

Այսպիսով, ևս մեկ անգամ, Քվինտիլ 1-ին անհրաժեշտ կլինի փոխհատուցում մատչելիության հետ կապված հնարավոր խնդիրները չեզոքացնելու կամ մեղմացնելու նպատակով: Եթե կառավարությունն ընտրի այս տարբերակի ամբողջական կիրառումը, ապա փոխհատուցումների ընդհանուր գումարը կհասնի մինչև 1193.4 մլն. ՀՀ դրամ՝ ընտանեկան նպաստների ծրագրում ներառված ամենաաղքատ տնային տնտեսությունների մասով: Նշված գումարը բավարար կլինի “արդյունավետ” սակագները ներկայիս՝ 150 ՀՀ դրամ միջին մակարդակից մինչև 240 ՀՀ դրամ բարձրացնելու ազդեցությունները

²⁰ ԱՍՏ կազմակերպության հետազոտություն, 2009թ.

չեզոքացնելու համար: Արժե նշել, որ 1193.4 մլն. ՀՀ դրամ գումարն արդեն իսկ ներառում է այն փոխհատուցումները, որոնք անհրաժեշտ են սակագները մինչև գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակը բարձրացնելու դեպքում (278.5 մլն. ՀՀ դրամ), մինչդեռ 914.9 մլն. ՀՀ դրամ գումարը կլինի աղքատների կողմից “մասնակցություն” կապիտալ ծախսերի համար անհրաժեշտ միջոցների ֆոնդին: Այդ պատճառով, ոչ աղքատ տնային տնտեսությունները կվճարեն գործառնական և կապիտալ ծախսերի մնացած համապատասխան մասերի համար:

ԾԱ հարաբերակցության արդյունքները և արդյունքների նախնական հակիրճ քննարկում

Ինչպես նշվել է վերը, կառավարությունը սուբսիդավորում է ՋևՋ ընկերություններին՝ և՛ գործառնական և՛ կապիտալ ծախսերի մասով, որպեսզի խուսափի սակագները կտրուկ բարձրացնելու անհրաժեշտությունից: Տրամաբանական է, որ ցանկացած սուբսիդավորման կամ սակագները ցածր, մատչելի մակարդակում պահելու քաղաքականությունն ուղղված է բնակչության աղքատ շերտերին: Այլ խոսքերով, կառավարությունն արձագանքում է ջրին հասանելիության հետ կապված սոցիալական, առողջական և այլ մտահոգություններին: Ներկա քաղաքականությունը ծածկում է բոլոր 5 քվինտիլները համարյա հասասարաչափ, սակայն տրամաբանորեն մատչելիությունը լուրջ մտահոգություն է աղքատների, այսինքն Քվինտիլ 1-ի և մասնակիորեն Քվինտիլ 2-ի համար: Այլ կերպ ասած, բոլոր հարկատուները վճարում են բոլոր 5 քվինտիլներին մատուցված ծառայությունների համար՝ անկախ աղքատ կամ հարուստ լինելու հանգամանքից: Սակայն, ցանկացած սուբսիդավորման ծրագրի թիրախավորումը կարող է բարելավվել՝ շահառուների խումբը սահմանափակելով ամենաաղքատ բնակչությանը: Այսինքն, հարկատուները կարող են դրամ “խնայել” վճարելով միայն ամենաաղքատ տնային տնտեսություններին մատուցված ծառայությունների ցանկացած նախատեսված մասի համար:

Ընդհանուր առմամբ, կառավարության վրա ընդհանուր ազդեցությունը կլինի հետևյալը.

- Տարբերակ 2-ի դեպքում բյուջեից ՋևՋ ոլորտում կատարվող ընդհանուր ծախսերը կկրճատվեն 8.4 մլրդ. ՀՀ դրամից մինչև 6.7 մլրդ. ՀՀ դրամ (1.7 մլրդ. դրամ խնայողություն),
- Տարբերակ 3-ի դեպքում՝ կկրճատվեն 8.4 մլրդ. ՀՀ դրամից մինչև 1.2 մլրդ. ՀՀ դրամ, այսինքն՝ 7.2 մլրդ. դրամ խնայողություն (տե՛ս վերը բերված աղյուսակը):

Պետք է նշել, որ չնայած Տարբերակներ 2-ի և 3-ի դեպքում տարբերությունները (1.7 մլրդ. և 7.2 մլրդ. ՀՀ դրամ) վճարվելու են ոչ-աղքատ տնային տնտեսությունների կողմից²¹ առանց ջրամատակարար ընկերությունների վրա ֆինանսական տեսանկյունից որևէ լուրջ

²¹ Գումարած արդյունաբերական սպառումը:

ազդեցության, սակայն այդուհետև ոլորտն ընդհանուր առմամբ կլինի շատ ավելի կայուն և կաշխատի բիզնես պայմաններում: Դիտարկված տարբերակների դեպքում կառավարության կողմից ջրամատակարար ընկերությունների ուղղակի վճարվող սուբսիդիաներ չեն լինի. բոլոր եկամուտները կառաջանան փաստացի բաժանորդներից՝ ծառայությունների դիմաց վճարների ձևով: Սակայն, տնային տնտեսությունների մի մասը ֆինանսական օգնություն կստանա՝ թանկացած սակագների իրենց բեռը չեզոքացնելու նպատակով:

Ինչևէ, այս ընդհանուր թվերը կարող են ներկայացվել նաև գործակիցներով: Ինչպես նկարագրված է վերը, ընդհանուր արժեքը կարելի է բաժանել ծրագրի շահառուների թվաքանակի վրա՝ կառավարության՝ մեկ շահառուի հաշվով ծախսը սահմանելու համար: ԾԱ գործակիցները կամ ծախսը մեկ շահառուի հաշվով ներկայացված են տարեկան և ամսական կտրվածքներով:

Աղյուսակ 14. ԾԱՎ գործակիցները ջրային ոլորտի քաղաքականության այլընտրանքների համար

	Տարբերակ 1 (Ստատուս քվո)	Տարբերակ 2 (Գործառական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Ծախսերի ամբողջական փոխհատուցում)
Ընդհանուր ծախս (Գործառական սուբսիդիա + Կապիտալ ծախսեր), մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,739.0	1,193.4
Աղքատ SS-ների թիվը	117,779	117,779	117,779
Ընդհանուր ծախսը 1 աղքատ SS հաշվով, դրամ տարեկան	71,553.4	57,217.3	10,132.3
Ընդհանուր ծախսը 1 աղքատ SS հաշվով, դրամ ամսական	5,962.8	4,768.1	844.4
Համեմատած Ստատուս քվոյի հետ, % փոփոխություն		25%	606%

Գործակիցները ցույց են տալիս, որ ներկայումս կառավարությունը ծախսում է ամսական 5.9 հազար դրամ մեկ պոտենցիալ շահառու տնային տնտեսության հաշվով: Սակայն, եթե սակագները բարձրացվեն 14%-ով՝ գործառնական ծախսերի ամբողջական փոխհատուցում ապահովելու համար (կապիտալ ծախսերը շարունակում են ֆինանսավորվել կառավարության կողմից), ապա կառավարությունը ստիպված կլինի վճարել 4.8 հազար դրամ յուրաքանչյուր աղքատ տնային տնտեսությանը՝ բարձրացված սակագները փոխհատուցելու համար: Մնացած ոչ աղքատ տնային տնտեսությունները ջրամատակարարման ծառայությունների համար պետք է վճարեն համապատասխանաբար 14% ավել (ընդունելով, որ սակագնի բարձրացման արդյունքում նրանք չեն փոխի սպառման վարքագիծը): Այնուամենայնիվ, Տարբերակ 2-ը կապիտալ ծախսերի ֆինանսավորման բեռը

թողնում է կառավարության վրա (տարեկան մոտ 6.4 մլրդ. դրամ)՝ միաժամանակ կրճատելով ընդհանուր տարեկան բեռը մոտ 25%-ով (տե՛ս վերևի աղյուսակը):

Եթե սակագները բարձրացվեին մինչև մի մակարդակ, որը կծածկեր ոլորտի բոլոր ծախսերը՝ և՛ ընթացիկ և՛ կապիտալ (ներկա մակարդակից մոտ 60%-ով բարձր), ապա կառավարությունը պետք է յուրաքանչյուր աղքատ տնային տնտեսությանը վճարեր ամսական մոտ 844.4 դրամ, որպեսզի նրանք կարողանային վճարել ջրամատակարարման հաշիվները՝ առանց սպառման ծավալները փոփոխելու: Նորից, անհրաժեշտ կլինի, որպեսզի ներկայումս ջրային ոլորտին կատարվող ընդհանուր հատկացումների և աղքատներին վճարվող ջրային սուբսիդիաների ընդհանուր ծավալի տարբերությունը վճարվի ոչ աղքատների կողմից՝ ենթադրաբար նրանց հաշիվները բարձրացնելով 60%-ով: Սակայն, կառավարության բեռը կկրճատվի մոտ 7 անգամ:

Նման կերպով, ոլորտի ընդհանուր կայունությունը կհասնի շատ ավելի բարձր մակարդակի՝ համեմատած ներկա իրավիճակի հետ: Ներկա իրավիճակում հնարավոր խնդիրները՝ ինչպես վերը տեսանելի է, կապված են կապիտալ ծախսերի ֆինանսավորման հետ, մինչդեռ գործառնական ծախսերը լուրջ խնդիր չեն առաջացնի: Մասնավորապես, խնդիրներն ակնհայտ կդառնան, երբ այլևս հասանելի չլինեն դոնորային միջոցները՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգման համար անհրաժեշտ կապիտալ ծախսերը ֆինանսավորելու նպատակով: Մինչդեռ, եթե ոլորտն աստիճանաբար անցնի այնպիսի մոդելի, երբ ծառայությունների համար ամբողջությամբ վճարեն ծառայություններ ստացողները, ապա այն նվազ խոցելի կդառնա արտաքին որոշումների տեսանկյունից:

Սակայն Հայաստանի ջրային ոլորտին առնչվող քաղաքականության հարցերը հնարավոր չէ համարժեքորեն լուծել օգտագործելով միայն ծախսերի արդյունավետության վերլուծությունը: Քաղաքականության տարբերակների հետագա ընտրության և քաղաքականություն մշակող կառույցներին տրվող խորհրդատվության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել վերլուծությունների տարբեր մեթոդներ և ուշադրությամբ դիտարկել հետևյալ խնդիրները:

- 1) Ոլորտում սահմանափակ դոնորային միջոցների ծախսման առաջնահերթությունները;
- 2) Զրի սակագների փոփոխությունները;
- 3) Աղքատ տնային տնտեսություններին սուբսիդավորելու տարբեր մոտեցումներ;
- 4) Վերը նշվածների համադրությունը:

Հաջորդ նախնական զեկույցում հնարավոր ընդլայնումների և փոփոխությունների ծրագրեր

Ծրագրի հետագա փուլերում կարող են իրականացվել հետևյալ քայլերը: Հետագա բարելավումների և փոփոխությունների շրջանակները կախված կլինեն սույն հաշվետվությանը տրված արձագանքներից:

- Քաղաքականության քննարկում և խորհուրդներ. ոլորտում կոնցեսիոն միջազգային վարկավորման կրճատված հասանելիությանը/մատչելիությանը զուգահեռ՝ սակագների բարձրացման փուլային մոտեցման քննարկում:
- Այն հնարավոր գործոնների վերլուծություն, որոնց ազդեցությամբ կառավարությունը չի նախընտրում քննարկված քաղաքականության տարբերակները (այն խնդիրները, խոչընդոտները, հնարավոր ռիսկերը, որոնք կարող է տեսնել կառավարությունը)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Հանրային Ծախսերի Հաշվետվողականության Բարելավման Նպատակով Հաստատությունների Զարգացման ծրագրի շրջանակներում Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից 2009թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացված տնային տնտեսությունների հարցման արդյունքներ;
- Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի համար Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնի կողմից 2009թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին իրականացված՝ վերջնական ազդեցության գնահատման վերաբերյալ հաշվետվություն;
- Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի շրջանակներում Միջազգային Հաշվապահական Ուսուցման Կենտրոնի կողմից 2009թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին իրականացված՝ “Անցումն ավագ դպրոցներից դեպի բարձրագույն կրթական հաստատություններ” Բազիսային Ուսումնասիրության Հաշվետվություն;
- Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի շրջանակներում տեղական հետազոտող փորձագետների կողմից 2009թ. ապրիլ-օգոստոս ամիսներին պատրաստված՝ “Առանձին գործող ավագ դպրոցների” մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն;
- Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի շրջանակներում տեղական հետազոտող փորձագետների կողմից 2009թ. սեպտեմբերին պատրաստված՝ ավագ դպրոցների աշակերտների հարցման հաշվետվություն;
- Կրթության Որակի և Համապատասխանության Ծրագրի շրջանակներում տեղական հետազոտող փորձագետների կողմից 2009թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին պատրաստված՝ ուսանողական վարկերի զարգացման վերաբերյալ Կոնցեպտուալ Փաստաթուղթ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հետազոտություն, 2005թ., www.armstat.am
- Մոր և մանկան առողջության պահպանման ռազմավարություն 2003-2015թթ. համար, www.moh.am
- Վերարտադրողական առողջապահության բարելավման ազգային ծրագիր 2007-2015թթ. համար, www.moh.am
- Կառավարության տարեկան գործունեության ծրագիր, www.gov.am/en/gov-program/
- 2009-2011թթ. Միջնաժամկետ Ծախսային Ծրագիր (ՄԺԾԾ), www.minfin.am/
- ԱՍՏ ՀԿ-ի ՕԲՎ, ԾԲՎ հաշվետվություններ, www.ast.am

ՋՈՒՐ

- Ասիական Չարգացման Բանկ, Նախագահի հաշվետվությունը և խորհուրդները Տնօրենների Խորհրդին, Առաջարկված վարկը՝ Հայաստանի Հանրապետություն. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագիր: 2007թ. հոկտեմբեր:
- Համայնքային Չարգացման Կենտրոն: Ազգային ֆինանսական ռազմավարության իրականացում Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար. Աջակցություն Հայաստանի ջրային ոլորտի լիազոր մարմիններին՝ հասանելի ռեսուրսների լավագույն օգտագործման գործում (Առաջադրանք 2): Պատրաստվել է EAP Աշխատանքային Խմբի համար: Հրատարակվել է OECD-ի կողմից: 2007ա.
- Համայնքային Չարգացման Կենտրոն: Ազգային ֆինանսական ռազմավարության իրականացում Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար. Խորհրդատվություն Հայաստանի ջրային ոլորտի լիազոր մարմիններին՝ նշանակալի սակագնային քաղաքականության մշակման և մոնիտորինգի վերաբերյալ (Առաջադրանք 3): Պատրաստվել է EAP Աշխատանքային Խմբի համար: Հրատարակվել է OECD-ի կողմից: 2007թ.
- Համաշխարհային Բանկ, Հայաստան. 2008-09թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամ, քաղաքականության արձագանքներ և տնային տնտեսությունների կողմից հաղթահարման ռազմավարություններ, 2010թ.
- Հայաստանի Հանրապետություն, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագիր (ԱՀԴԾ-II-ի վերանայված տարբերակ), 2008թ. սեպտեմբեր:
- Հայաստանի Հանրապետություն, 2009-11թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագիր, 2008թ. հունիս
- Հայաստանի Հանրապետություն, Ջրային տնտեսության պետական կոմիտե, 2005-2009թթ. տարեկան հաշվետվություններ, www.scws.am
- Հայաստանի Հանրապետություն, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, Ջրամատակարար ընկերությունների կողմից 2005-2009թթ. ներկայացված հաշվետվություններ, www.psrc.am
- Հայաստանի Հանրապետություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2007-2009թթ. տարեկան հաշվետվություններ, www.mss.am